

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Գրք. Ա. ՏԵՐԵՎՈՅԱՆ

ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

XIX — XX դ. դ.

(Ողագոված դասախոսության մեջ
ձեռագրի իրավաբան)


ՊՐԱԿ VІІІ

591.9%
Տ-54

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԱՄԱԿՉՈՂՔՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1939



Պրոֆ. Ա. Տերտերյան

ՀԱՅՈՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



XXIX - XXX դ. հ.

(Աղաջրված գասարություններ)

Վ. ՏԵՐԵԱՆ.

I.

Վահան Տերյանը պատկանում է այն Յազպազյուտ հայ գրողների թվին, վորոնց մասին բավականաշատք քննադրատական աշխատություններ են յեղել: Բայց հատկապես Տերյանի մասին յեղած այդ քննադրատությունները ունեն հրմեական թերություններ: Վորոնց են այդ թերությունները: Ամենից առաջ պետք է ասենք, վոր Տերյանի մասին յեղած ուսումնասիրությունների մեջ հաշվի չեն առել նրա գրած հրապարակախոսական հոդվածները, իսկ այդ հոդվածները մեծ նշանակություն ունեն հեղինակի աշխարհայակը պարզելու համար: Յերկրորդ՝ քննադրատները մեծ մասսայի նկատի յեն առել այն հանգամանքը, վոր Տերյանն ավելի շատ կապված է արևմտայնվրոպական գրականության հետ: Կապել ծն նրան նաև ուսու գրողների հետ, բայց մինչեվ այսոր շի պարզված Տերյանի կապը հայ գրականության հետ, թէ նա ինչ գրական ժառանգություն է ստացել, ինչպես է ոգտագործել այդ ժառանգությունը և ինքը յեղաճի վրա ինչ է ավելացրել: Յերրորդ՝ Տերյանի ուսումնասիրության համար կարելոր է նաև նկատի առնել նրա յերկերի հետ-մահվան



հրատարակությունը : ավելի շուտ՝ նկատի առնել Նրա թողած
կրտսերու աջմատությունները , սեվագրությունները : Այս բաժի-
նը Տերյանի ուսումնասիրության համար կարեվոր է , վորով-
հետեւ Տերյանը այդտեղ փորձել է նոր գրական ուղիով ըն-
թանալ և հակառակ երյան հեղափոխության շնչի տակ Նոր
ստեղծագործական խոսք ասել : Չորրորդ՝ Տերյանին ուսումնա-
սիրողները մեծ մասամբ խոսել են Նրա բանաստեղծությունների-
մասին , բայց հեղինակի անձնավորությունը , Նրա բնավորու-
թյունը , կենսագրական մի շարք հանգամանքները չեն շոշափ-
վել : Մինչդեռ դա հարկավոր է հաշվի առնել համոզվելու
համար , վոր Տերյանն ունեցել է նաև բունտարական գներ ,
ութուստ վոգի , կազմակերպչական տաղանդ , յեղել է լավ
ագիտատոր , և այլն : Այդ բոլորն անհրաժեշտ է իմանալ .
վորպեսով Տերյանի մասին այն միակողմանի հայացքը շը-
կազմվի , թե նա ինչ վոր «կանացիական տրամադրություն-
ների » յերգին է : Այդ բոլորը կպարզեն միաժամանակ ,
վոր Նրա «վերադարձ»-ի յերգերը վոչ միայն պայմանավոր-
ված են քաղաքական - հասարակական պայմաններով , այլև
հեղինակի անձնավորությամբ , Նրա տեսպերամենոր շատ
զներով պատրաստի նույն հանդիսացել վերադարձի յեր-
գերի տրամադրություններն ընդունելու համար :

Հինգերորդ՝ Տերյանի մասին յեղան քննադատների մի-
ուրիշ պակասությունն ել այն է . վոր այդտեղ շատ քիչ
են ուղադրություն դարձել Տերյանի յեկանական կողմությու-
նին , շատ ավելի թերագնահատվել է Տերյանի բնույն ,
մինչդեռ նա այն հեղինակների թվին է պատկանում , վո-
րոնք հանդիսանում են վոչ միայն բանաստեղծներ , այլև
խոշոր լեզվաշինարարներ :

Վեցրորդ՝ Տերյանի ուսումնասիրության մեջ պահանջ
է նաև նրա հասարակական գենքի մի վորոշ կողմի պատ-
կերացումը, սա այն է, վոր Տերյանը յեղել է մեր հայրենա-
սեր բանաստեղծներից մեկը։ Նրա պատրիոտիզմը շատ թօ-
նորոշ յերեվուութ է մեր գրականության պատմության
մեջ, բայց դժբախտաբար Տերյանի ստեղծագործության
այս կողմը կամ ուշադրության չի արժանացել կամ թերա-
գնահատվել է։

Տերյանն իր գրական ասպարեզ իջնելու որից հան-
դիսանել է գրական պայքարի հրանող։ Նրա շուրջը բոր-
բոքվել և մի ուժեղ վեճ և վիճողները բաժանվել են
յերկու, յերեւ կարելի յե ասել, իրար ժխտող խմբերի։ Մի
խումբը նույնիսկ ժխտել է Տերյանի հայ բանաստեղծ լիծ-
ուու հանգամանքը։ Քննադատներից մեկը նրան անվանել է
«հայախոս ուսու» և աշխատել է ցույց տալ, վոր Տերյանն
իր թեսատրիկայով, իր բանեցրած ձեզերով վոշթե հայ
բանաստեղծ է, այլ ուսար միջավայրի արգաօթ։ Յեղել են
նուև այս կարծիքի հակառակ տեսակետներ։ Յերկրորդ տե-
սակետը պնդող քննադատները Տերյանին համարել են
հայ բանաստեղծական կուլտուրայի ժառանգորդ, նրա
ստեղծագործությունը համարել են հայ լիրիկական ատեղ-
ծագության շղթայի անհրաժեշտ ողակներից մեկը։
Արա լավագույն փաստը հանդիսանուս է այն, վոր Տերյանը,
հանդես գալով հայ գրականության մեջ, վոշ միայն իս-
ղոր վեճերի սորիթ տվել, այլև յերիտասարդ սերունդի
մեջ մեծ շափով արձագանք գտավ։ Տերյանը ստեղծեց
գրական շկոլա, իսկ սա մի մեծ պատրիզ է, վորը քչերին
և վիճակվում։ Այս բոլորը ցույց եր տալիս, վոր Տերյանը

Մի անգամքց տիրել է գրական հրապարակին, նոր խոսք է
և ասել և ուր ձեզ է հանդիս բերել և այդ ձեզն ու խոսքը
հայ գրականության պատմության անջատ Մի յերեվույթը չե,
այլ Տերյանը սպունգի պես ՑՅԵԼ է մեր անցյալ զողը գրա-
կան կովառոքան :

Այսմ տեսնենք, թե Տերյանի մասին բացասական կար-
ծիք հայտնողները ինչպ ծն հիմնավորում իրենց տեսակետը:
Քննադատներից վոճակք պնդում են, վոր Տերյանը հայ մի-
ջավայրի և իրականության յերգիչ չե, պնդում են, վոր նրա
քնարը ռուսական մօն քաղաքների քնար է և նրա յեր-
գերը հյուսված էն մեծ քաղաքների բնորոշ մոտիվներից:
Նոյն այդ քննադատները պնդում են նոյնպես, վոր վոչ
միայն Տերյանի թեմատիկան, այլև նրա գրական վարպե-
տությունը կապված է վոշ թե հայ գրականության հետ, այլ
գլխավորագեն ռուսական գրականության, սիմվոլիստական
ազգության հետ: Պնդում են, վոր Տերյանը իր հոգեկան
ապրումներով շատ ավելի կապված է Անդրեյ Բելիքի, Ֆյոդոր
Սոլոդուրի և Ալեքսանդր Բըռկի հետ, քան թե Կիվենիք
Բարեկամունիք, Հայեաննես Թումանյանի հետ:

Այսուհետեւ այդ քննադատները հաշվի յեն առնում
նաև Տերյանի ստեղծագործության մեջ մի յերեվութ, սա
այն է, վոր Տերյանը մի անդ հայտնել է, վոր ինքը հայրե-
նական ռուս շունի, վոր իր համար միենույն է Հյուարիսը թե
նարավը: Մրանից քննադատները յեպրակայրել են, վոր նա
վոչ միայն ուսար և հայ հայրենիքին, այլև շի ցանկանում
այստեղ հանգրված ունենալ: Նրան ուսար են հայրենիքի
բարձրաբերձ լեռները, հայրենի լայնարձակ գաշտերը և,
վերջապես, նրան ուսար են նաև հայ գրականությունը

նրանով, վոր նորա գործերի մեջ բացակայում են շինականի կյանքն ու կեցաղը և այդ կյանքին ու կեցաղին նվիրված պարզունակ յերցերը:

Հովհաննես Գնունին «Մթնշաղի անուրջները» համարում են նայ գրականության համար իբրև անկոչ հօգոր և պնդում են, վոր, Տերյանի բանաստեղծությունը նայ իրականության մեջ հաջողություն չի ունեցել և չունի: Տերյանի մասին բացասական կարծիք հայտնողներն աշխատել են իրենց այդ բացասական կարծիքը հիմնավորել նաև Տերյանի աշխարհայացի վորոշ քննադատությամբ, նրանք պնդել են. վոր Տերյանն իր ապրած հասարակական կյանքի գեմ չի բռնոքում, պնդել են. վոր գյուղին գուրս յեկած այդ բանաստեղծը գյուղի բողոքը չի բերում արգյունաբերական քաղաքի դեմ, ինչպես անում են մյուս նայ գրողները: Տերյանը վոր միայն չի բողոքում, այլև չի սանկանում բողոքել:

Մենք ե ասենք, վոր Տերյանի մասին հայտնած այդ կարծիքը բոլոր կողմերով ճիշտ չե. որինակ՝ ընդհանրապես Տերյանին նայ գրական կուլտուրայից կտրելը, ոտար աղեցության արգասիք համարելը, ինչպես հետո յել կտեսնեք, յերբեք չի կարելի հիմնավորել. մանավանդ դժվար ե Տերյանին ցույց տալ իբրեւ բոլոր կողմերով համակերպվող տիրող կարգերին: Մենք հետո կտեսնենք, վոր Տերյանի մոտ բողոք կա, այն ել սոցիալական գույներով ներկած բողոք:

Քննադատների մի մասն ել հաշվի յե առել Տերյանի ստեղծագործության վորոշ շրջանը, վորի մեջ անկումային տրամադրություններ գոյություն են ունեցել, և այդ անկումայնությունը տրամական ե համարել ամբողջ տերյանա-

կան պոեմի համար։ Տերյանի այդ քննադատները շեղստել ծն Տերյանի յերգերի թախնուտ բնույթը, Տերյանի սնորքները, նրա տրամադրությունների վշտուտ բնույթը։ Նույնիսկ քննադատներից մեկը Տերյանի հիվանդության հետ համապատասխան նրա պոեմի, հիվանդուտ տրամադրությունների արդյունք և համարում այն և պնդում է, վոր Տերյանին կարդալու հետո թուք տողորվում եք հոգետեսության և վշտագին տրամադրություններով, կարծեք թե զտնվում եք մի հիվանդի մոտ, վորի գունաւուժություն եք տեսնում և նրա թախնական հայացքից խորապես ազդվում։ Նույնիսկ հետ-հոկտեմբերյան շրջանում հայ ֆուտուրիստ Տեղինակներից մեկը 1923 թվին իր ազիատություններից մեկի մեջ Տերյանին անվանում է «Յերուկ»։

Քննադատների վամանք Վահան Տերյանի տիրությունը համարում են նրա կյանքի բոլոր շրջանների համար բնորոշ։ Նույնիսկ «Կերադարձի» յերգերի մեջ նրանք տեսնում են յուրատեսակ տիրություն։ «Կերադարձի» յերգերի հասարական արժեքը այդ քննադատները թերագնահատում են, չոչոյ տալով, վոր բանաստեղծն այդ յերգերը գրել ե վոչ այնքան հասարակության համար, վորքան ինքնիր համար։ Բանաստեղծն իբրև թե այդ յերգերի մեջ կոչ և անում վոչ թե հասարակությանը, այլ կոչ և անում ինքն իրեն, վոր արթնանա և նոր վոջով, նոր ուժեղ խոսքեր արտահայտի։ Բայց Տերյանի քննադատների մեջ ամենից խիստը հանդիսացնել է Մամբրե Մատթեոյանը, վորն աշխատել է վոշնչակնել բանաստեղծին։ Ինչպես վոր քննադատներից վոմանք Մատթեոյանին են վոշնչացնել, այնպես եղ Մամբրե Մատթեոյանը աշխատել է

զոհնշացնել Տերյանին՝ պնդելով, թե նա անհատականությունը
չունի, ինքնուրույն չե և յերե գրիսառությունները հանենք,
տակը Տերյանի վորինչ չի մնա:

Բայց Տերյանի յերկրպագուների մեջ յեղել եւ նույն
այնպիսիները, վորոնք շատ խիստ կերպով Տերյանին յերկրպագուների են: Այդ յերկրպագուներն եւ ընկել են մյուս Յայրահեղության մեջ: Տերյանի յերկրպագուն քննադատներից մեջ անհիմն կերպով պնդել են, վոր Տերյանի առաջ վողջ հայ պոեսիան յեղել է բարբառային և միայն Տերյանի եւ սկսվում ինկական գրական լեզվով հայ բանաստեղծությունը:

Ամենիր ճիշտ Տերյանին գնահատել են յերկու խոշոր բանաստեղծներ՝ Հովհաննես Թումանյանը և Վահեր Բրյուսովը: Հովհաննես Թումանյանը գովելով կատավ Տերյանի բանաստեղծությունները, ասել է, թէ՝ « Ծատ գեղեցիկ են, գրեթե մեր լիրիկայի մեջ նար բաներ »: Իսկ Վահերի Բրյուսովը Տերյանին հանձնարարել է ուսու ընթերցողներին, գրելով նրա մասին հնատվյալ տողերը: « Տերյանն ընդունվել ընթերցողների, քննադատների կողմին, վորցին մի անկանկանելի մեծություն, թե՛ գնահատողների մեջ կային նաև տարածայնություններ: Իր ձեվական նվաճումներով Տերյանը մոտ ե արքմանայի բանաստեղծներին, բայց և այնպես նա հավատարիմ ե լնացել ուսունաց պոեսիայի հիմնական վորութ՝ իր վոգեվորությամբ, անկեղծությամբ, շատ խնդրիների նկատմամբ իր մուտքումն և վողջ իր աշխարհայականը, եւ շխոսենք լեզվի և վոեր ժամանք »:

Դեռք ե նկանել, վոր Տերյանի քննադատները աշխատ չեն գրախորել նույն Տերյանի ձեվական նվաճումները,

այն հանգամանքը . վոր Տերյանն ընդարձակել է հայ պատ-
պիայի սահմանները շափի և յերածշտության իմաստով և
յուրապարթը և յօվբոպական պատվիայի նվաճումները : Ամենքը
միաբերան խոստովանել են , վոր Տերյանը յերածշտակա-
նության միջոցով իր տրամադրություններն անմիջապես
հաղորդում է ընթերցողներին : Բարյացնակամ քննադատնե-
րը Տերյանի և Մրնշաղի անուրջներին մեջ լավագույն յեր-
գեր համարում են հետեւյալները . «Յերեկի շողերը» ,
«Ֆատում» , «Սիրտս ցավում ե» , «Ինձ թաղթք» , «Բյուր
մարդոց մեջ» , «Կորնաթ կարկաչուն» , «Յնորք» և «Պայ-
ծառ աստծո» :

Տերյանի նկատմամբ արված մի քանի քննադատու-
թյուններից կարելի յէ այն յեկրականությունը դուրս բե-
րել , թէ նա մի բանաստեղծ է , վորը գրել է մրայն
բանաստեղծների համար , մի բանաստեղծ , վորը յելնում
է վոշ թէ բնությունից . այլ գրքերից : Այդ թշնամական կար-
ծիքի մեջ հրժանական միտքը իհարկե սխալ է , սակայն
մի բան միշտ է , վոր Տերյանը հայ գրական կուլտու-
րան այնքան եր բարձրապարթը , վոր հարկավար եր նրա
հետեւից հասնել : Նա իր ժամանակին ստեղծել է Նոր
հաշակ և Նոր եստետիկական կզրաշափ : Նրա մոտ
այդ նորությունը վոշ թէ արտաքին մի հանգամանք է ,
այլ բղյում է նրա ստեղծագործության ներքին բովանդա-
կությունից : Տերյանի մոտ ձեվը վոշ թէ հագուստ է ,
այլ մարմնամաշկ , աւտիք և շատ սխալվում են նրան
վոշ հայ բանաստեղծ համարողները : Տերյանի բանա-
տեղծության անհրաժեշտ բաղկացուցիչ մասն է նրա
նյութի յեկանի հայտնագործման ձեվը : Տերյանը յեր-

բեք ձեզով շի խաղացել։ Գրական ժողովրությանը (ֆունկուսնիկություն) նրան խորթ եր, նա նպատակ չուներ մի վայրկյան վարժական, հետո ձանձրական։ Կոչ նա ուղևոր ե տեկական հաճույք պատճառել, և իսկապես, վորքան շատ ենք նրան նայում, այնքան շատ նորությաններ ենք գտնում, վորն առաջին անգամ շենք նկատել։ Յերայնն արվեստագետ ե և վոչ թե խալտուրշչիկ։ Կարպեա և վոչ թե դրամանենց և հենց այս ե պատճառը։ Վոր այսոր մեր խոր հրդային սույնալիքատական կարգերուն։ Նա դուրս չի մղված մեր գրական հետաքրքրության մարզիկ։ Տերյանին այժմ մենք մեծ շահով ոգտագործում ենք դասագրքերի մեջ, քրեստոմատյաներում, յերաժշտության մեջ և այլն։ Տերյանը գնահատվել ե հայ յերաժիշտների կողմից վոչ միայն նախքան հոկտեմբերյան հեղափոխությունը, այլև հեղափոխությունից հետո։ Նույնպես և լիրիկայի ուսումնասիրության ամեն մի փորձ, կամ տաղաչափության վերաբերյալ ամեն մի ձեռնարկ այսոր շի կարող անտարբեր անկանոն։ Տերյանի մոտով, վորովհետեւ նա թէ՝ մեկին և թէ՝ մյուսին բերել ե բազմաթիվ նորություններ, իհարկե ուսումնասիրելով և ոգտագործելով իրենից առաջ կատարված բոլոր նվաճումները։

Այսօտ մի քանի խոսք Տերյանի գրական գործունեյլության և կյանքի մասին։ Տերյանը ձևվել է 1885 թվականին գանձագուղում։ Նախնական կրթությունը ստացել է այն տեղ, ապա՝ աշարժել ե Արագածածի քաղաքային շարուր Միջնակարգ ուսումնական վերջապես և համարյան Եւմարանում։

իսկ բարձրագույնը՝ Մոսկվայում և Հենինգրադում, որ և լուս
տաղանդավոր ակադեմիկ Մառին: Տերյանի կենսագրությու-
նից հայտնի յէ, զոր նա շատ յեռանդուն և կենդանի բնագու-
րություն ու ունեցել, շատ հետաքրքիր գրություններ և յեղել:
Գանձայում քաղաքական միտինգ և կազմակերպել, իսկ 1916թ.
Սուրումում հրվանդ ժամանակ բողոքի ցույց և կազմակերպել
սանատորիական ուժի դեմ: Տերյանը մեծ կազմակերպչա-
կան ձիրք և հանդես բերել նաև նայ գաղթականներին աջակ-
ցություն ցույց տալու գործում:

Հայրենի տանը նա իր մեծ յեղբոր Մտերին և յեղել: Մեծ
յեղբայրը մեր գյուղագիրներից մեկն և՝ Ձավախերին, զորը
հրատարակել է իր պատմվածքների ժողովաճուն 1905 թին,
«Պատկերներ» խորագրով: Իր այդ ժողովաճույով Ձավախերին
մեր դեմոկրատ հեղինակների շարքն և մտնում կորի հայտա-
րարելով կուրակների: Բյուրոկրատների կամ, ինչպես ինքն օր
ասում, զորբաների և փաշաների, գյուղացի կծանների դեմ:
Ձավախերին տալիս ե շերտավորված գյուղի կայությունը,
բատրակների անտանելի վիճակը, վորոնցից մեկը կատաղում
և հարստի դեմ և այրում նրա կալեն ու կուտը: Գյուղում իշ-
խում ե բռնչչքի իրավունքը և ով ուժեղ ե, հարուստ, զո-
րեզ, զաքաս յէ: Մերտ կաշխատի դրացու խել գեղեցիկ է
կիզ և յեղել, կոչ թէ ձի մրենոցն ե-ասում է Ձավախերին:
Այս գեմոկրատ հեղինակի աղջույթյունն իր փոքր յեղբոր
վրա անպայման փաստ ե և ինքպես Ագապյանը ծատուր-
յանի համար, այնպէս էլ Ձավախերին Տերյանի համար յե-
րաքանչափ ուժան պրեմինի խորհրդատուի դեր են կատարել:
Տերյանի ստեղծագործության մեջ յեզած վորոշ հովվերգական,
գյուղացիական խաղերը (որինտ' և հրեան շոբան սարթութեան)

և այլն) պետք է բացատրել վոչ միայն հասկացյանի աղջեցությամբ, այլև Զավախիսու գյուղական գործերի և անձնավորության անմիջական ներգործությամբ:

Բայս հայրենի տեսք և Զավախիսու աղջեցությունից, զատ խոշոր ե յեղել նաև 1905 թվի հեղափոխության աղջեցությունը: Այդ հեղափոխությունը վոչ միայն Տերյանի հասարակական գործունեյության մեջ ե վորոց հետք թղթել, այլև նրա պռակիայի մեջ: Տերյանի այնպիսի բանաստեղծությունները, ինչպիսին են «Յերանի Նրանց», վոր մութ բանտերում», «Հուսաբային նա բարձրացավ կախաղան» և այլն, բացատրվում են 1905 թվի հեղափոխության աղջեցությամբ:

Ասկայն, 1905 թվի հեղափոխությանը հետեւած ու ակնիայի տարիներին Տերյանը մասն բուրժուական ինտելիգենցիայի մի մասի հետ միասին լրում է հեղափոխության դիրքերը և տուրք ե տալիս լրման և հուսահատության տրամադրություններին: Բայց սրա Տերյանի պետք ե հրշենք, վոր հենց նոյն ռեակցիայի տարիներին Տերյանն պբազում է նաև զատ ոգտակար գործերով: Որինակ՝ նոյն ռեակցիայի ժամանակ նաև ուսունասիրում է վրայերեն լեզուն, սրա պատճառը յեղել է այն, վոր յերբ Մոսկվայում տոնում են Ակադի Ծերեթլու հոբելյանը և այս հոբելյանի ժամանակ Տերյանին մի ուսու հեղինակ հարց է տալիս, թե դուք ճանաչում եք Ակադի Ծերեթլուն, Տերյանը ամսաշում է, վոր ինքը այդ խոշոր հեղինակի հետ ճանոր լինել և վորոշում ե վրայերեն սովորել և թարգմանություն անել այդ հեղինակից: Էա թարգմանել ե նաև Շոթա Ռուսական աշխարհու և Ընձեռագործի նախերգանքը և

այդ Արգմանությունը շատ ե հավանել ակադեմիկ Մառը:
Հենայի դեպքերի ժամանակ Եերյանը սեծ բեկու
ե ապրում վերահաս հեղափոխության կապակցությամբ
և նա իր յերգերին տաշիս ե մարտական բնույթ: Արվես-
տի մասին հանդես ե բերում նոր մոտեւում, Գրմնա-
կանում ժիտելով ռեակցիայի շրջանի իր պասսիվիկմբ:

«Ազում եմ վազվա պնձության գուշակ,

Կարուս. Նետած լուսնին հեռաւն,

Վառել յերգերս, վորպես գրոշակ,

Ու մեռնել, վորպես հերոսն ե մեռնում»:

Այդ նոյն շրջանում գրած «Արեվաճագ» վերնագրով
վոտանավորը շատ բնորոշ է բանաստեղին դարձի նկա-
տառումով: Բանաստեղին կարծես թե այդ վոտանավորով
մի կամուրջ ե ստեղծում 1905 թվի հեղափոխության ըս-
կզբնական շրջանի և իր ներկա տրամադրությունների միջեմ:
Ինչպես 1905 թվի հեղափոխության ժամանակ նա յերգել է
մութ բանտերում տանիքող հեղափոխականներին, այնպես ել
«Արեվաճագի» մեջ նա այդ բանտարկյալներին իր յեղբայր-
ներն ե անվանում: Բանաստեղին արշալույս համեմա-
տում ե խավարի հետ, գիշերի հետ. պարզ ե, վոր արշա-
լույսը ազատություն ե համարում, իսկ գիշերը՝ սորկություն:

«Հռություն ե, մութ ե այնտեղ, սակայն իս

Արտում արդեն արշալուս ե, հարություն:

Վողջուն ձեզ, մութ ուղիներում յեղերային:

Իմ յեղբայրներ, հեռաներում և բանտում»:

Եերյանի մոտ «Արեվաճագի» այս տրամադրությունը
ավելի ուժեղանում է 1917 թ. սովորական հեղափոխու-
թյունից հետո: Այդ ժամանակ Եերյանը գրում է «Անը Ե

ասում ԵԵՆԻՆԸ գյուղապետին « Ցշանավոր պրոպագանդիստական աշխատությունը , ապա կռվում է Անդրկովկասյան հականեղափոխական կուսակցությունների դեմ : Էնզային կոմիսարիատում նա աշխատակցում է ընկ. ԱՏԱԼԻՆԻՆ և գրում է լուծկահայ հարսի ժամին մի տրակտոատ՝ համաշխարհային ինչպերիալիզմի դեմ : Սակայն հետովետ առաջ գնացող նրա նանր նիւթանդությունը թույլ չի տալիս բանաստեղծներն իր այդ բեղմնաւոր գործը շարունակել և 1920թ. Թրենքուրդ քաղաքում թուրտանի վրայով Թիֆլիս գալու հանուպարհին մահանում է :

Տերյանը սկսել է գրել դեռ ևս աշաֆերտական նստանիր : Նա գրական ասպարեզ է իջել 1905թի հեղափոխությունը հետո և 1908թին լույս է ընթայել իր բանաստեղծությունների ժողովաճուն՝ «Մթնշաղի անորդներ» վերնագրով : Իր յերկերի 2-րդ հրատարակությունը կատարել է 1912թին, ամիսորդ ժողովաճունի 60 բանաստեղծությունների վրա ավելանելով նաև այն յերգերը , վորը նա լույս էր ընթայել առանձին պարբերական հրատարակությունների մեջ : Նրա յերկերի երջին հրատարակությունը կատարվել է նրա մահից հետո Պոլսում, 1922-23թվերին , Կ հատորով : Տերյանը մասնակություն է ունեցել մի շարք թերթերի , աշխատակցել է Գարուն»-ին , «Գեղարվեստին , ԱՀորիսոն»-ին , «Մզական»-ին : Անդրատակցել է նաև Բրյուսովի հրատարական Պոետիա Կրյունիի» ժողովաճանին և այնուհետեւ գորոն մասնակցություն է ունենում , յերբ Մաքսիմ Գորկին դատարակում է իր և Արմյանսկայա լրտերատորան ժողովաճունը : Բայր բանաստեղծական յերկերից , գրական և ննադատական մի շարք հոդվածների , Տերյանը կատարել նաև թարգմանություններ թե՛ բանաստեղծական գրակա-

նորյունից և թե քաղաքական գրականությունից . Կոտանավոր-ներ թարգմանել Բողընիք , Իրյուսովիկ , թարգմանել Ենոքա- Ռուսթավելու «Հնձենավոր»-ի նախնագահքը . Ուկար Աւայլդի «Սալոմեա» գրաման և Արթուր Ծնիգընի և Տիկին Բերտա Գար- լան» վեպը : Առաջին անգամ թարգմանել Ենոհին «Պետո- թյուն և հեղափոխություն» նշանավոր աշխատությունը :

Եատ հետաքրքրական է Վահան Տերյանի հայացքը թարգմանության մասին : Վահան Տերյանը գրել է «Յեզ սրաւ եք , յեթ կարծում եք , վոր Իրյուսովը կամ մյուս ուս պոետները թարգմանից մեքենաներ են , վոր կթարգմանեն , ինչ վոր տաք , շպետք ե յենթադրել , վոր ինչ վոր տաք ուս պոետին մեքե- նայի նման կթարգմանի : Այդպիսի մի յենթադրություն նուն- պես վիրավորական է պոետի համար , պոետը մեքենա չե »: Այս կարծիքը մի վորոշ կողմից նաև ինքնագնահատում է , վո- րովհետեւ Վահան Տերյանը իսկապես թարգմանել է այնպիսի նյութեր , վորոնք իր բանաստեղծական խառնվածքին և այնուհե- տեւ քաղաքական հայացքին համակրելի յեն յեղել : Վահան Տերյանի թողած գրական ժառանգության մեջ կարեվոր է նշել նաև նրա բանաստեղծական սեվագրությունները . վորոնք պարզ ցույց են տալիս բանաստեղծի կարգայրան գրական ռեալիզմի ուղին : Պոլսում հրատարակված յերկերի Ժողովանվի 4-րդ հա- տորի մեջ վետեղված են նրա բանաստեղծությունների սեվա- գրությունները : Ամենիկա առաջ հիշենք «Փշե պսակ գրքից» վերնագրած սեվագրությունները , վոր պարունակում է 14 վոտա- նալոր . գրանք նվիրված են աղասության մարտիկներին , բանտերում և կախաղանների վրա իրենց կյանքը վահողնե- րին : Այնուհետեւ հետաքրքրական է նրա «Հուշեր հապար- յան ճեմարանից» վերնագրիրը կրող բանաստեղծությունների

շարքը, վորն իրեն մեզ պարունակում է Շ վոտանավոր: Բանա-
տեղմը դրանց մեջ հրցում է իր գիշերորիկ կյանքը և ազարյան
հեմարանում: Հրցում է սիրով իր ընկերներին, վերակացուներին
և այլն. մնացած վուանավորները Տերյանի քնարին հասուկ
բանաստեղծություններ են: Արանց մեզ ուշադրության արժանի
յե Տերյանի սերը Հովհաննես Թումանյանի նկատմամբ: Հետա-
քրքրական են նրա վոտանավորները. վորոնք Նվիրել է, ինչ-
պես ինքն է ասում՝ Հովհաննես Թումանյանի պաշտորն: Այդ
վոտանավորների մեջ Տերյանը խոսում է վոր միայն Հովհաննես
Թումանյանի մասին, այլև սիրով է հրշատակում նրա ընտանիքը:

Տերյանն անձամանակ մեռավ, հասրվ 35տարեկան, նա
նման եր այն արվեստագետին, այն արձանագործին, վորը
մեռնում է իր արհեստանոցի մարմարե բեկորների միջեվ,
մարմարե բեկորներ, վորոնցից նա պետք է զեռ կերտեր սքան-
չելի արձաններ: Տերյանը պատկանում է այն ստեղծագործող-
ների թվին, վորոնց թվին պատկանում են նաև Գյոթեն, Հով-
հաննես Թումանյանը: Յեթե Գյոթեն մեռած լիներ Կանան
Տերյանի գրարիքում, նա գրած չեր լինի իր «Թառուսուր»:
Յեթե Հովհաննես Թումանյանը մեռած լիներ Կանան Տեր-
յանի տարիքում, նա գրած չեր լինի իր «Անոցց»-ի 2-րդ
հրատարակությունը: Մահվանից առաջ գրած մի շարք վոտա-
նավորների, Թարգմանությունների մեջ Տերյանը հանդես է
բերում քարձր լավատեսական տրամադրություններ: Նախ նա
շի կարևոս մահից, բայց նա ափսոսում է իր անկատար
թողած հղացումները: Յերկրորդ՝ դիտում և աղացուցում է, վոր
բուրժուական քաղաքը ստեղծել է իր գերեզմանավորին-հե-
ղափոխական պրոլետարիատին: Յերրորդ՝ բանաստեղծը տաք մահ-
ից փողոց է յելուս և, վերցանցն, շորրորդ՝ նա գինու, յերգի

և սիրո ներբող և կարդում՝ թարգմանելով Բոդլերի հայտնի «Արքեֆը»։ Տերյանը հետեւյալ յերկողովն է որու՝ իր կյանքը և արվեստը համադրելով։

«Թերեվ եր արվեստն իմ խնդօսմ»։

Իսկ կյանքս այնքան գծվարին եր»։

Ինչպես յերեսում է, Տերյանի համար պոեմիան յեղել է, ասես, մի սիրունի և կյանքի գծվարին պայմանների մեջ բանաստեղծը դիմել է նրա ոգնությանը և նա ստացել է իր վշտերի ամոքումը։

Տերյանի կյանքի և գրական գործունեյության այս համառոտ ակնարկը ցույց է տալիս, զոր նա անցել է զորոշ զարգացման ուղի և այդ ուղու ընթացքում հակասությունների միջյով հասունացել է նրա հասարակական քաղաքական դեմքը, նրա աշխարհայացքը։ Այժմ անցնենք այս աշխարհայացքի բնորոշման խնդրին։

■.

Տերյանի հասարակական քաղաքական աշխարհայացքի զարգացման ետապները հետեւյալներն են՝ նախ 1905 թվի հեղափոխության ազդեցությունը Վահան Տերյանի պոեմիայի վրա։ Այդ ժամանակ նա գրել է «Հուսաբային նա բարձրացավ կախազան» և «Յերանի նրանց, ով մութ բանտերում նշանավոր վոտանավորները»։

«Հուսաբային նա բարձրացավ կախազան,

Արեվածադ, ո՛, արշալուս այրունոտ,

Կանգնան Եյին պինդորներն ու քահանան,


Գունատ ու լուս կանգնան Եյին նրա մօտն։

Տերյանը 1905 թվի նպուրայում հանգեստ գոլով իրեվ բա-

նաստեղն, իր հասարակական խավի հետ միասին բեկումն եւ այլ
բուժ և սկզբում հարում հեղափոխության գաղափարներին։ Նա
այդ ժամանակ գրում է. «Սույնալիկմը, սա անհատի կատար-
յալ ազատությունն է, անհատի, վորը սիրում եւ որիշներին,
զոհաբերում եւ և դրանով իսկ հաստատում ինքն իրեն։
Ահա թե ինչու պրոլետարներ բոլոր յերկրների, Միասնական
Մեծ կանչ է. հրաշալի լուսնգ»։

Ինչպես հայտնի յէ, 1905 թվի հեղափոխության ժամանակ
Տերյանը հարել է սույնալիկմին։ Նամակներում մեմարել եւ ընկե-
րի գաղափարը։ Ինչպես տեսանք, գրել է մի քանի վատանավոր-
ներ նոր կյանքի կողերով։ Ասկայն 1905 թվի հեղափոխության
նր հետեւան ուսակցիայի ^{շրջանում և ուսուցանի} ազդեցությամբ Տերյանը լքում է իր
գիրքերը։ 1905 թվի հեղափոխության ալիքն իզնում է։
Նա ուսակցիայի շրջանում մանր բուրժուական ինտելիգենցիայի
հետ միասին ապրում է լքում և հրասթափություն։

A 5604
Տերյանի հոռետեսական արամադրությունները շատ վորոշ
հասարակական պայմանների արգյունք են։ Հետաքրքրական եւ
նկատել, վոր մի քանի գրտնականներ, առանձնապես բնագետներ
աշխատել են հոռետեսության յերեզույթը և գրա փրկիսովայություն
նր համարել բիոլոգիական պատճառները արգյունք։ որինակ՝
նշանավոր գրտնական Մեջնիկովը պետում է հետեւյալը. «Յեւ
րոպայում հոռետեսական աշխարհացաց մունել են լիրիկներ,
շնորհիվ իրենց շատ զարգացած պայմանության»։ Նա նույն
պես պետում է, վոր ու հայրոնի պեսարմբազմի պատճառները
մեկը նրա սեռական կյանքից հզփանալն է։ Այս գրուն
կաններին Տաղրելով՝ մի յերգիծարան նկատել եւ անդամա-
կանություններից հտու հոգուներ մառախողն ավելի խուսափ
վորով հետեւ սիրվությունները յերգում են անձրեւ և աջա-



քննազատներից՝ Հովհաննես Գևորգիկ իր «Էտյօց պրառ-
մեռ ուղարկած աշխատության մեջ այն մրցքն է հայտնել,
թե Տերյանը «Մթնշաղի անորդներ» բանաստեղծական մուլ-
վանդի մեջ Տերյանը կյանքի ժամ կապվում է մրայի մի կետում,
սա Գիւլիկական սիրո բնագավառն է»:

Պետք է ասենք, վոր իսկապես Տերյանի անհատապաշտու-
թյունը և հոգեանությունը, սիրո և մենության յերգերը, նրա
պատրանքը և յերազանքը բոլորն ել Տայրե ի ճայր իրենց մրա-
կրում են ռեակցիայի ժամանակաշրջանի կնիքը։ Մենք արդեն
գրտենք, վոր Տերյանն իր տեմպերամենով և բնավորությամբ,
իր կազմակերպչական ձիրքով առհարարակ իր մեջ շուներ վորե-
քե հիմանդրագիրն և անկումային բնական տվյալներ, բայց հա-
սարակական-քաղաքական տվյալների շնորհիվ նույնիսկ այդ իրեն
առողջ ձնված անձնավորությունը զառնում է ռեակցիայի շրջանում
վարու անկումներն որամադրությունների յերգիւ։

Տերյանի աշխարհայակքի համար կարեվոր մի մոմենտ է
այն հանգամանքը, վոր նա մենությունը պաշտամունք, կուլտ
չի գարձնում, ինչպես որինակ Կնուտ-Շամունը, վորը մենու-
թյունն այնպես է սիրում, ինչպես մարդ կարե իր սրտի մո-
տիկ անձնավորության։ Տերյանը, ընդհակառակը, տանջվել է մենու-
թյունից։ Տերյանի այն խոսքը, թե՝

« Եյոր մարդոց մեջ,

Պաղ մարդոց մեջ,

Կորպես տրտում անապատում,

Մենակություն,

Մենակություն »

այդ տրտում անապատ արտահայտությունը չույց է տնօքին,
վոր Տերյանը մենությունը բնորոշում է բացասական կողմով։

Նա այդ տիսուր անապատում չի կարողանում հաճույք ստանալ և հենց այս հանգամանքը հրսք է հանդիսանում Տերյանի հետագա վերագարձի յերգերի համար: Հենց նոյն «Մրնշաղի անորջներ»-ի մեջ: ուր ընդհանրապես լրան և հուսահատթյան արտահայտություններ կան, իս նաև վերակենդանան լու տրամադրություն: Որինակ՝ իր «Գարուն» պարթագին վատանավորք: վարով նա փակել է իր ժողովածուն:

«Ահա յես կրկին պվարթ ո՛ո զահնել.

Դուրս յեկա տիսուր մենումյան բանուից,

Պայծառ աշերդ վողջունում են ինձ

Յեկ յես շեմ կարող իմ ճիշը պահել:

Բասել ես իմ դեմ վոսկեղեն հեռուն,

Զուրել ես հոգուս դաշտերը արտում,

Ուրիշ երգեր են հնչում իմ սրտում,

Վողջույն քեզ արեվ, վողջույն քեզ գարուն»:

Ինչպես տեսնում եք, այս վոտանավորի մեջ եւ Տերյանը խուսափում է մենությունից, նրան անվանելով բանտ:

Այդ հանգամանքը նկատի առնելով ինքը, Վահան Տերյանը իր բանաստեղծությունների յերկրորդ հրատարակության առաջաբանում իրավակի կերպով խոստովանել է, վոր սերտ կապ գոյություն ունի «Մրնշաղի անորջներ»-ի և «Վերադարձի յերգերի միջեց»:

Կենայի դեպքերից հետո, յերբ հեղափոխթյան ալիքը բարձրանում է, Տերյանը գրում է իր «Արեվանագը» և «Վերադարձի յերգերը», վորոնք մեր քաղաքական լիրիկայի գործերից են: Տերյանն իր «Վերադարձ» վոտանավորի մեջ հրադարական կույրի կոշ է անուօտ:

«Յեկա, վոր այստեղ ճեզ համար այսոր՝

Հրեզն խոսքեր կուտ և խնդրում,
Լսես հաղթական մարտի սնձություն,
Յեսեմ շարքերը ձեր հպարակոր»:

Ինչպես տեսանք, Տերյանը մեծ քաղաքում իրեն սենակ եր զգում: Սա բուրժուական կարգերից դժուճուլ մի ձեզ ե: Այդ ինդիվիդուայիկար «Վերապարձ»-ի յերգերում հաղթահարում ե, յերբ բանաստեղծը յելնում է «ՄԵՆՈՒԹՅԱՆ խավար վնդանիր»: Խավար վնդանիր յելնելով՝ նո կոչ ե անում, վոր ուրիշները ևս, յերե քնած են, զարթնեն, յերե հոգնած են առույցանան:

«Յեվլուսաբային, յերբ հոգնած լինեք,

Յերբ քնած լինեք՝ թշնամուց խաբված,

Արեվածագի սննությամբ արբած,

Կանչեմ ձեզ, ճշամ. յեղբայրներ՝, յելեք:

Վահան Տերյանը 1917 թվին մտնում է Կոմունիստական կուսակցության շարքերը, այնուհետեւ նրա ստեղծագործության վրա յերեցում ե հոկտեմբերյան սովորական հեղափոխության հզոր զանցը: Բանաստեղծը վորգեցրում է իրեն կոմունիստական գաղափարախոսությանը և գործով աշխատում է իրագործել իր քաղաքական իգեալները: Նա, ինչպես և Հակոբ Հակոբյանը, դրվատում ե հոկտեմբերյան հեղափոխության նշանավոր գործիշներին և գրում է մի շարք ներբողներ. հայտնի յե, որինակ, Ստեփան Շահումյանին նվիրած վոտանավորը:

«Միրտ վորպես վառ ատրուշան, պահիր վառ,

Միրտ հրկեց, մրնում դաժան, պահիր վառ:

Միրտ խանդուտ, հրաբորքոք, պահիր վառ,

Խինդը տենդուտ, միրտ՝ վահան, պահիր վառ:

Չար աշխարհի, խավարի դեմ պահիր վառ,

Վորպես դրաշ արևանման պահիր վառ»:

«Վառ» բառը բույր տողերի մեջ կրկնելով՝ Տերյանը կացելու և չկացել և չույս տակ բացակառ բոլշևիկի բնավորությունը և խառնաճքը : Եկանեանեավ Տերյանը ինքնաքննադատական մոտեցում և հանդես բերում նաև իր անպյալի վերաբերյալ : Նայում է իր անպյած ուզու և անպայման բացասաբար և խոսում իր նախորդ անկումային տրամադրությունների մասին : Նա նախկին կյանքը խափարի հետ և համեմատում, իսկ նոկտեմբերյան հեղափոխությունից հետո հազար կյանքը՝ լույսի հետ :

«Թե՛ եմ յերգում, կարսիր՝ արյունաբորք

Ակատության դրոշ՝ թե՛ քառք ...

Անմիտիթար ու շար թօ որթին,

Անապավեն կյանքիս, կյանքիս մոլոր,

Իզավ մի լույս, մի նուր վերջին

Յե՛ հրդեհեց հոգի »:

Այս հրդեհեց արտահայտությունը ցոյց է տալիս բանաստեղին այն խանդակառությունը, զոր առաջ և զայր միապետության և բորժուակիայի պարտությունից, վորը բանաստեղծը տալիս է շատ ուժեղ տաղերով .

«Դատաստանի որվա»

Ահաբեկ աստղերի նման

Թափվում են թագերն հնորյա

Յե՛ զահերը լինում են կործանել ...

Վահան Տերյանն իր ժողովրդի հարազար զավակն եր, նա այդ ժողովուրդից ստացել էր բուռն չափություն դեպի ազատությունը : Յե՛ս որա հետ միասին նա միեւնույն ժամանակ հարազար է բոլոր ազգերին, կողառուազես միջազգայնական և նրա յերգերը հեղությամբ կարող են թարգմանվել ուստի լեզվով :

Տերյանը 1918թ գրում է իր «Հայ գլուղապիներին և
բանվորներին» նշանավոր հոդվածը։ Նա թարգմանել է Կարլ
Մարքսի «Կենսագրությունը», ընտրվել է Կենտգործկոմի անդամ,
մասնակցել է Բրեստին, իբրեւ հայկական գործերի եքսպերտ,
անկիջող պայքար է մղել տիրահռչակ դաշնակության դեմ,
ցրել է Առարախանի հակառեղափոխական ազգային խորհուրդը։
Այդ բոլոր դեպքերում նա զեկավարվել է ընկեր ՍՏԱԼԻՆԻ
սույնութեաներով, աշխատելով նրա զեկավարած ազգային գոր-
ծերի կոմիսարիատում։ Այդ ժամանակ նա գրում է ինտեր-
վենցիայի դեմ։

«Մեր թշնամին բերում է տանկեր։

Բերում է սեղեր սեվամորթ։

Կեռ դաշույններով զալիս են։

Մռայլ գոյներով զալիս են։

Բող զան։

Մեր կրակի դեմ անկոր է,

Մեր դրոշի դեմ կրորտակվեն։

Մենք մութ աշխարհում ջան ենք

Բող զան։

Բող զան,

Բող զան։

Այս վոտանավորը զրված է հրապարակներում արտասանելու
համար։ Տերյանի աշխարհայացքի համար շատ կարեվոր է նաև
նրա վոտանավորների մի սիկլը, վորը նա նվիրել է «Նայիրիս-ի»
Վոտանավորների այդ շարքը յերթեք չի կարելի անվանել նայիր-
նալիստական, այստեղ նա հայ ժողովրդի թշվառությունն է յեր-
գում առանց թթու նայիրնալիկմի։ Հայրենիքը նա յերգում
է այնպես, ինչպես մի ժամանակ յերգել է Հովհաննես Թոմանցաւ

Այդ վոտանավորի մեջ Տերյանը մեծարուս է և նորարատը և հայ լեզուն, վորպիս հայրենասիրության սիմվոլներ։ Հայ լեզվի փառաբանումը, վորը տալիս է Կահան Տերյանը, կարելի յէ համեմատել Տուրգենեվի արձակ բանաստեղծություններից մեկի հետ, վորի մեջ Տուրգենեվը մեծարուս է ուս։ Մեծ աչքի հանարեղ լեզուն։ Վասրանդին հիշուս ե «Նայիրի»-ի բոյե վարդերը, լայի նման յերգը, թխագույն, տիրուր դեմքերը և կոչ ե անում հրով մկրտված նրա վկանը յելնելու։

Մահվանից առաջ գրած մի քանի յօրգերուս Կահան Տերյանը կարուտով ե հիշուս իր հայրենի Պանձան, իր հայրենական տունը, մորը և ծննդավայրի գեղեցիկ բնությունը։ Հավ ե «Իմիկի յերգը», իր սանկության վառ հրշողությունները - գլուխը դնում ե մոր գիրկը և հեքիաթ ե լսուս, ուզում ե հայրենի Պանձայում մեռնել և սրա հետ միասին փափագում ե գյուղական իդիլիական կյանքով ապրելու մասին։ Լինելու շոբան սարերուս, սափորիկը ջուր տայիր և իրար պարզ սիրելունք ...

Այդ բոլորի հետ միասին նա խիստ քաղաքական պայքար ե մղում կամավորական շարժման և դաշնակցության դեմ։ Ծաղրել ե դաշնակցության տիրանոշակ կուսակցությանը և ասել՝ «Ով ե տեր կանգնել իմ ավեր հայրենիքին»։

Տերյանի աշխարհայացքի համար կարեվոր արժեք ե ներկայականում նրա «Հրաժեշտի զավելը», վորը նա գրել ե իր մահը նախազգալով, և վորի մեջ նա տվել ե իր վերաբերմունքը մարդկանց և բնության նկատմամբ։ Այդ վոտանավորի մեջ շատ յայտուն ե Տերյանի սերը դեպի մարդը, սերը դեպի բնությունը և իր՝ բանաստեղծի ինքնազնահատուում։

«Մնաք բարով ասում եմ յես բոլոր մարդկանց
շար ու բարի,

Տանջվող ու վորբ աղամորդուն ասում եմ յես
մնաք բարով:

Յերերի մոմին, կանաչ ծովին, անտառներին խոր ու մթին,
Գարնան ամպին, լուս վոլորտում ասում եմ յես մնաք բարով:
Մարդարտաշար իմ հուշերին, իմ գիշերին, իմ ֆշերին,
Արտուռներին վոսկե արտում ասում եմ յես մնաք բարով:
Ծաղիկներին դեռ շբացված, հոգիներին դեռ շկրպված.

Մանուկներին վառ խլոտոն ասում եմ յես մնաք բարով:
Տերյանի հասարակական, քաղաքական աշխարհայացքի տե-
սակետից կարեմոր ե նշել նաև նրա յերերի մի մասի հետ-
մահվան հրատարակությունը:

Տերյանը մահացավ ճանր և յերկարատեսվ հրվանդությու-
նից հետո, մահվանից առաջ տեսնելով սրբան զավակի մահը:
Այդ յերկու հանգամանքը նրան շատ ճանր մտահոգություն
ին պատճառել: Զավակի մանր նրա մեջ ճնել է մի այլ աշ-
խարհի հնարավորության հարցը. « Ախս յեթե լիներ մի այլ
յերկնային աշխարհ » – քայականշում ե սրբող հայրը: Պարզ
յերեվում ե, վոր սրբո կոկնի ազդեցության տակ գրվածքան
ե և մեծ հարց ե, թե այդ կոկին անցնելուց հետո Տերյանն
այդ վոտանավորը կոպագրեր, թե զամբյուղը կնետեր վորացի
անձնական և վոշ հասարակական արժեք ներկայացնող վոտա-
նավոր: Հետաքրքրական ե նկատել, վոր, 80-ամյա Գյոթեն
յնը հոտափայում լսեն, վոր իր նորանին յերեխան մեռել ե,
իր հրշատակարանում գրեց՝ «Հառաջ գերեզմանի վրայով»:
Յերերորդ հանգամանքը, վորը թողել ե իր ազդեցությունը
Տերյանի քնարի վրա, սա նրա հրվանդությունն է: Իր ձեռ-

քոյ հրատարական յերկերի մեջ Տերյանի լիրիկան տառան
լերպատշ չունի, նրա վորթն սիրն է և Գրենականում առաջ:
Մինչդեռ Շատանկան հրատարակությունների մեջ նու հանգեց
է զարդի վերաբեր մեջ, վոր մահից զարտելում է. «Ո՞վ պետք
է փրկել մեջ մահից և բացականացն ու բանաստեղծը»:

Բայ. Տերյանի արվեստի մասին պիես և առանձնապես
խոսենք, բայց առաջն նկատենք նրա հետաճաշվան հրատա-
րակության մասին հետեւյալը: Բայս աշխարհայուսքը այն բա-
յերից, վորոնց մասին խոսեցինք՝ Տերյանի իր արվեստի մեջ
մուծել և իր ժամարին խորհ յերանցներ: Այն բոլոր յերգերի
մեջ, վորոնց խոսում է հայ ժողովրդի մասին, նրան վորո-
նում է յերբեք այնպիսի առականեթերու, վորոնք միանգա-
մայն միատիեզական էն: Հայ ժողովրդին նմանեցնում է
«Յորնապատիկ խոզան» առաջամատերը: Խոսում է ու նկա-
ռնենք, վոր լուս հրաշք բացի և և այլն: Պարզ առենում մեր,
վոր այդ բոլորը նոր շեցու և և վոր պայտապուր և անհորակատ
շեցու: Մենք մնում ենք այն համապատճենքն, վոր դրանք վայր-
կենական արամացրությունները արդյունքներ են, յեթ բա-
նաստեղծը առողջանար և իյանքի գործն գաղտը դուրս գար,
կմոռանար և իր զամբուկի մանը և իր հրանգությունը և
առաջամատերը, վորին պատիզ և արձ հայ ժողովրդի առ-
ռաջանեքները համեմատեցն ենք: Այժմ անցնենք Տերյանի
լիրիկական այն զարներին, վորոնց խօսն և հրատարակել իր
կննդաւելության որոց:

IV.

Տերյանի ստեղծագործությունը կարելի յէ քահանեց յերեւ
շրջանին: Առաջին... Վարձում ների շրջան. ուս նրա անձեղ

պատանեկությունն է . յերբ բանաստեղծը յերազում է կյանքի
մասին : Աշխարհը յերեվում է նրան պատրանքների մջուղի
մեջ : Այս շրջանում իրերը նրան ներկայանում են վերջալուսի
աղոտությամբ պարուրված : Մերը թվում է նրան վորած մի հե-
ռավոր կամ, ինչպես ինքն է ասում, վորած լուսնի մի շող, կամ
անմատչելի մի եյակ : Բանաստեղծին գրազում օն հեռուները, նա
շի բավականանում առորյա կյանքով և ձգում է դեպք անհայտ
ու անորոշ ճանապարհներ . նրան ուսար է հայրենի տուեր : Ար-
դր հանգրված չունենալով՝ նա տարվում է անուրջներով և
ինքնարորասուզվում է կամ, ինչպես ասում են, ներանձնանում է :

Այստեղից արդեն մի քայլ է դեպք նրա ստեղծագործության
յերկրորդ շրջանը, ուր մեկուսացումը հիանքափության հետ
գիրկընդիմուն է, ուր սիրո հեռավոր իդեալն այժմ նրա համար
զառնում է չնորդ և հուշ մարող մի մարմնական թովշանք,
վորը նրան հղուածում է, հազեցնում է ի վերջու ստրայում
գրաժարվել այդ մեղսական շանկություններ : Նա կտրվում է
կյանքից, սիրու, հայրենիքից, ներանձնանում ինքն իր մեջ
և տուրք տալիս կատարյալ պատիվիկմին, կրավորականությանը :
Բանաստեղծը կամենում է մեռել, քայլ նա մահից հետո յել
շի ուզում, վոր իր գերեզմանին մոտենան, նրա իդեալն է լրա-
կատար մոռացունքը : Հասարակություններ կտրվելով՝ բանաստեղ-
ծը՝ առանձնանում է բնության մեջ, տիրությամբ է հիշում
իր ավերման հայրենական տունը . կամաց կամաց նա գրտակ-
ցում է իր վիճակի Տանրությունը և դժգուններ . « Ինձ ո՞վ
է մատնել այս մառախողի » հարցում է նա : Այդ գրամբ-
ությունը կուգաղբարպում է հասարակական կյանքի վերելքին
և Տերյանը մտնում է իր ստեղծագործության Յ-րդ շրջանը :

Այժմ նա գրում է իր « Վերադարձ»-ի յերգերը : Բանա-

տեղմը Տիմա խանդավագուուս և մի նոր զաղափարով, «Ակո-
րել մարդոց հետ և մարդոց համար»։ Նա յերգուս է «Արտ-
վաճագը», «Շռավոտը», և վողջունուս է փողոցով անց ու դարձ
անողներին։ Բանաստեղծը դուրս է զայիս մենության շնչանից,
վողջունուս է արեվին և գարնանը։ Նայուս է Կյանքին ու ա-
լիստական հայապետով և տոգորվուս հանրուգուտ տրամադրու-
թյուններով։ Նա արդեն լավատես է վաղվան նկատմամբ և
յերգուս է զայիքը մեծ եքստավով, քարունը։ Այս գարունը
պատրաստուս է աշխատավոր ժողովուրդը, բանվորությունը, վո-
րին բանաստեղծը նվիրուս է իր սիրուր և իր քնարը։

Վորոնեֆ են Տերյանի պոեսիայի Տիմնական մոտիվները։
Ակսբնական և մասամբ Հ-րդ շրջանի համար տիրական են ան-
հատապաշտությունը, հոգետեսությունը, հուսալքումը, անրջա-
յին տրամադրությունները, յերազն ու պատրանքը։ Վերջին
շրջանի համար բնորոշ են լուսավոր տենչերը։

Ակսբնական շրջանի համար բնորոշ է մի գիծ, այդ այն
է, վոր հապարյան ճեմարանուս գրած իր վոտանավորների
մեջ Տերյանը գտնվուս է Հովհաննես Թումանյանի աղետ-
կության տակ և աշխատուս է Տիմնականուս ու ալիստական
գրական ուղղության գնով։ Հետեւյալ տողերի մեջ նա աղջված
է յերեվուս Հովհաննես Թումանյանի «Գութանի յերդ»-ից։

«Կարկուս յեկավ, արտերս տարավ,

Կնիկս Տրվանդ, տղայքս քաղցան,

Ումուխ ել ահա կրծքուս մեռավ,

Կոռ, բեզյառ յերթամ դարդերս շաշկան»։

1905 թվի հեղափոխությունից հետո յեղան ու ակսբնական
շրջանում Տերյանի ու ալիսկան տեղի յէ տալիս սիմվոլիզմ։
Դրա յերգերի Տիմնական մերն են դառնուս փախուստը կոչ

և անգորրությունը, ապա մենակովով զգացմանը, աշխարհը վրայի անապատ, մեյս մուտքանակի համար բնորոշ է նրա և օջախ մարդու մեջ, պազ մարդու մեջ և վրանափառ։ Ժողովրդից կարգան մասնակիանը կյանքում հենարան ըստներական պահանջման պահանջման և հեռացումը։

«Մոռանել, մոռանել, ամեն ինչ, ամենին մոռանել,

Գորել, շրաբնել, շախուսալ, նոռանել և»

Այս զրջանում գործածան սրբազնատական ողջությունը ինչոք և տարբերվում նրա առաջին զրջանում գործածան։ Ուստիսական ոպպություններ։ Ենթանք իր սրբազնից միջոցով աշխատանք եր բառերին ուսու բայրին ուսու բայրին ուսու բայրին ուսու բայրին անցկացնել իր սեփական տրամադրությունների միջում, նրա մոտ բնությունը վոյ թե զեկորացիա յէ, այլ կյանքի և գործանելության մաս, յերբեմն նա սեսանելիք պատճերը գոյաց է լսելի պարկերով և ընդհակառակ։ Նա իր սրբազնատական յերգերի մեջ տուրք և տալրի նաև լաւության պատվարին։ Նրա համար անգրանկանն ավելի խորն և քան գրանկանանը։ Կնոջ համարում է անգրանկան խորության մարմարում։ Տերյանի սրբազնի մի սեպական յէ ուստիրացի զեմ։ Կարծես թե նա տառ է, մար կյանքի ինչպես զար է, զա սեղ չօրինեց ։ Կյանքը հասկանալու համար պետք է ուսու պատվարություններ, սրբուներ, լեզու մոտեցնել մուղիկային։ Այսպիսով այդ սրբազնինը մի հակադրությունն էր մասնակիան աշխարհայութիւններ։ Քնաթյան և սրբ բարերգան պատճերացածներուն Տերյանը բերան եր սրբութական գրանկանության նմուշներ նաև գրանկանության մեջ։

Տերյանի Այդ շրջանի գործերում չի կարելի գտնել զարնան
ճոխ զարդարված, կենսաւիրինդ պատկերներ, նրա պեյզաժը զվարթ
չե և տիրուր բանաստեղծքը խուսափում է արեվի լուսավոր ճա-
ռագայթներից: Աիմլուրիցին բնորոշ նն աշնան յերգերը. իսկ
հրմնական գույները՝ մթնաղաղային յերգերն են, բնությունը
նա ներկում է իր նույգերի համապատասխան գույներով:
Նու սիրում է աղոստ լույսը, կիսամութը. դժգույն Յաղիկները.
այդ շրջանում նույնինդ բնությունը նրան չի ամոքում, բը-
նության մեջ նու չի կարողանում գտնել այն խաղաղ հանգը-
քանը, վորի պատճառով նա հեռանում է քաղաքից: Իրա հետ են
իր տիրության հուշերը, նու չի կարողանում մոռանալ ինքն
իրեն և հրմնականում նա տառապում է իր այդ եգորիկուրից: իր
այդ Յանը հոգեկան կացության մեջ նրա համար մրակ փարուր,
դա կինի ե, սերն ե, վորին նու ձգտում է կյանքի յեռ ու կեռի
մեջ մտնելու նոյատակով, սերը նա յերակում է իբրիկ մի ցան-
կալի հանգրվան:

Ինքն իրեն մոռանալու համար նա տենչում է իրեն թաղել
ուրիշի հոգու մեջ. Դա նրա իդեալն է: Բայց կնոջ հոգին ան-
միջապես նրա առաջ չի բացվում, կինը մնում է իբրեւ
մի անձանոր իորիցավոր առեղջման:

«Կա քո հոգու մեջ անթափանց մի մոթ,
Քեզ միշտ թագսնող մի նուրբ վարագույր...
Փակ են քո սրտի հեռուներն իմ դեմ,
Յերբ իննթ. խնդությամբ փայփայում եմ քեզ՝
Յեզ սիրում եմ քեզ և քեզ չգիտեմ»:

Իրական կնոջը և սերը վորակելով իբրեւ քաղցր սուս,
Տերյանը ձգտում է իդեալական կնոջը. իդեալական սիրուն:
նա ձգտում է ցնորք աղջկան, հրաշքների դիսունուն, վորի

Եթու զնում է սրանալ գեղի հեքիաթային հեռուները : Քաղցր սուտր գուշնում է տիբուր քուն և ահա այժմ նա ապրում է վուկե հեքիաթով , մի վուկե յերազային աշխարհի մեջ : Սիրո յերդերի մեջ թարին ու համակերպություն սուանում են բարձր յերածշտական բնութաղիր , համակելով ընթերցողներին անասեիք տիբությամբ :

« Եթու զնում ես՝ չգիտեմ ուր ,

Կուռ ու տիբուր ,

Հեկ զունատգոյ աստղի նրման

Յես զնում եմ տրտում մենակ ,

Ահնժամանակ

Ծաղկից ընկած թերթի նրման» :

Հորոնք են Տերյանի պոեզիայի առանձնահատկոթյունները : Բովանդակության և ձեզի կողմից Տերյանի ապրումների ֆոնը մեծ քաղաքն է , վորի ժիորի մեջ , աղմուկի մեջ ավելի խորն է զգացվում բանաստեղծի մենակոթյունը , նա զդային է , հոգնած և անորոշ տրամադրություններով ձանրաբեռնված :

« Հապտերը միզում մազում ե պաղ բու :

Յես աննպատակ շրջում եմ անվերջ ,

Յես լոռ անցնում եմ փուլոցից փողոց

Ու մեղմ լալիս եմ չուրտ մշողի . մեջ» :

Ի՞նչ պատճառից ե . առաջ զալիս այդ լայր : Լայր նրա մեջ առաջ ե զալիս մարդկանց պաղ շրջապատի հանդեպ , ուր տիրում է մրցությունը և ուր մարդը մարդու դեմ զայլ է , այդ պաղ շրջապատից նա փախչում է , ներանձնանում ինքը իր մեջ , ինչպես առում են սիմվոլիստները՝ իր փղոսկրյա աշտարակի մեջ :

Հոյակապ ե Տերյանի մոտ մեծ քաղաքի նկարագիրը :
« Յես դուրս եմ զալիս նորից շրջելու ,
Նեղ փողոցներն ու կրկեսները բայ :
Շփոթ նվազով աղմուկ ու սուզու
Շարժում են առաջ որը ժրացան -
Բոցոս խնճույքում, ձուլված խինդ ու կոճ
Հյուսել են կյանքի հախարդված շրջան .
Հապճեպ հոսանքում և մարդ, և անիկ,
Արեկոնթությամբ մի խայտանկար
Խենթ փողոցների բավիղներն անթիվ
Ժրերի նման խառնում են իրար :
Ամենի ձայնով յերկաթն է խոսում ,
Պողպատն ե հչում շաշյունով գողցոյ ,
Յեկ բազմադարձ որերի լեզուն
Հնչում ե այստեղ, վորպես մարտակոյ » :

Աերջին հաշվով ինչն ե ընթերցողին գրավում կահան
Տերյանի պոեզիայի մեջ : Նախ նրապուրից ֆանտազիան, վոր
հանդես ե բերում բնության նորբ զգացողություն և ապա
նրա լեզվական կովտուրան : Ենթայման նա լեզվի վրա մի
կարմանալի տիրապետություն ունի, իսկ գաղափարների արտա-
հայտության պլաստիկ և մելոդիկ յեղանակը նրա ձեզր գար-
ձնում ե լավագույն որինակների մեջ կախարդական :

Տերյանն իր «Մթնշագի անուրջներ» ժողովածուն բայ ե
արել «Տիրություն» վոտանավորով : Ինչպես վոր ոպերայի
ուշերտյուրայի մեջ ամբողջ յերկի հիմնական մոտիվն ե հնչում .
այնպես ել այս նախերգանքը շատ բնորոշ ե Տերյանի
ամբողջ գրքի համար .

« Սահուն քայլերով, աննշմար, վորպես քնքուշ մթի թեկ ,

Մի ըստվեր անցավ. Յաղիկու ու կանաչ մեղմիկ շուելով.
Իրիկնամարին, թփերն որորող հովի պես թեթեվ
Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով...
Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շնչաց,
Կարծես թե սիրո քնքուշ խոսք ասաց նիրհող դաշտերին—
Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց,
Յեզ Յաղիկները այդ սուրբ շշուկով իս սիրտը լորին....

Հովհաննես Գնունին այն կարծիքն է հայտնում, թե «Մթ-
ընշաղի անուրջներ»-ի մեջ Տիասթագոված բանաստեղծը կյան-
քի հետ կապվում է միայն սեռական սիրո միջոցով, իսկ
1912 թվի Տրատարակված Տերյանի մի քանի վոտանա-
վորների մեջ նա տեսնում է պոռնոգրաֆիական տարրեր:
Գնունու զնահատականը Տիմնականույթ Տիշտ չի: Նախ «Մթըն-
շաղի անուրջներ»-ի մեջ բայի սեռական սիրուց, կա նաև
յերազական սեր, իսկ Տերյանի մարմնասիրական մի քանի
վոտանավորները յերբեք չի կարելի անվանել պոռնոգրաֆիա,
ճիշտ այնպես, ինչպես Ավետիք Խանակյանի «Մեղքի և պղծման
յերգերը» մենք շենք անվանում պոռնոգրաֆիա:

Լենայի դեպքերից հետո Տերյանի ստեղծագործության մեջ
մենք նկատում ենք բեկում և նա նորից փարզում է ուսալիկունին:
Հանգստություն վորոնող բանաստեղծը կրկին գալիս է յեռուն
քաղաքը և յերգում նրա բովը.

«Մայթի քարերը հարազատ են քեզ,
Քեզ նոր ե թվում յերգը հնորդա,
Ակատ ե նոգիդ, անշարժ ե հեզ
Յեզ տիրությունը անուշ ե հրմա»:

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծը գործելու տեղով է
բոնված և նոր բացվող առավոտը նրան գինովովնում է.

« Ակյուր դու քաղցր ես նայում, առավոտ,
Յեզ դյութական ե համբույրը քո վոյ,
Յեզ լայն ե քաղցան հեռուն արեվոտ,
Յեզ գինով եմ յես մինոր յերազով »:

Աշնան յերգերի և մենության բանաստեղծը այժմ արել է
յերգում և վողջոնում ե մարդկանց :

« Զարթեք, յերգեր իմ, ժամ ե հնչելու,
Զինելու նորից գնդերը չորից,
Մեռմ արտերը կյանքի կողելու,
Յեզ բորբոքելու զայրութ ու կորից »:

Համազիարհային պատերազմի ժամանակ Տերյանը թունալից
խոսք ե ուղղել կամավորական շարժման ավանտյուրիստների դեմ:

« Զեմ հավատում ճիշճերին ձեր ցննագին
Յեզ խանդավառ աղմուկներին այս զփոթ,
Ով ե կանգնել պաշտպան յերկրին իմ ավեր,
Ով ե թարգման մեր դարավոր տանջանքին »:

Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ և հոկտեմբերյան
հեղափոխությունից հետո Տերյանի պոելիքան նոր լիցք ե ստանու:
Նա հոկտեմբերին նվիրել ե հետեւյալ կրակու տողերը.

« Քեզ եմ յերգում, կարմիր

Արյունաբորբ

Ավատության դրոշ :

Հարյավ հոգին իմ զորք,

Հավեռ հարյավ,

Ցնծուն ու խենթ

Վորպես մրրկահավ »:

Տերյանի հայրենասիրական յերգերի մեջ կա գործ ազատու
թթվելու իր սպեցիֆիկյան անսյալիք, բայց պետք ե նկատել զե-

Միշտ հոկտեմբերյան հեղափոխությունը Տերյանի այդ ժամանի քար-
երի մեջ նկատվում է զարոշ լերկվություն։ Իհարկե վերջի պարզ
նրա մեջ հաղթառ է հեղափոխական խանդավառությունը և նա
թողնում է իր սպեցիֆիկյան անցյալը մշտապես։ Հոկտեմբերյան
հեղափոխության առաջին որերի շունչը նկատվում է նրա հետե-
յալ տողերի մեջ։

« Յել գեմոկրատիա,

Խոր ու խնդուն աղմկիր ամեն կողմ,

Դուրս թափիր մութ խուսերից

Յել վորոտա վորակես հողմ,

Յել մրրկուծ ու հրկեց,

Թող վոլորուն ու խավար

Այդ փողոցները

Խառնիքաղանձն,

Յել, վորակես հուր ու լավա,

Երս և փողոց և կրկես.

Ծաշ ու շառաշ, ճիշ ու կանչ,

Կողջօ սրբիր ու լվա »։

« Վերադարձի յերգերից Տետո Տերյանը վոշ միայն իր յերգերի
բազանդակության մեջ, այլև պատկերավորության բնագավառում
նար մոտեսում է հանդես բերում։ Քաղաքային տպավորությունների
հետ նա ոգտագործում է նաև իր հայրենական գյուղական կյան-
քից ստացած վերհուշերը։

« Արեգակը հոկ վլուկի յե մաղում,

Արտերիս մաքուր վլուկե Տումի մեջ..

Արտ, արտերիս պես, յեղիր միջտ բեղուն,

Արեգի նման հրահրիր անշեց,

Յել վորակես լեերն են ցոլում,

Յրտում աշնային,

Մշուշների տակ,

Դու յել սիրու, մնա հանրության զալուն

Տրտմությամբ անշար, և խոր, և հստակ»:

Այժմ անցնենք Յերյանի՝ բանաստեղծության ձեզական նվաճումների խնդրին: Կահան Յերյանը իբրեւ բանաստեղծ ունի շատ մեծ կուլտուրա: Նա հայ լիրիկայի մեծագույն վարպետներից է: Նրա բանաստեղծությունները փայլում են բարձր արվեստով, յերաժշտականությամբ, խոր հուզականությամբ, տաղաշափական մեծ կուլտուրայով և, վերջապես, մշակված, մաքուր լեզվով:

Յերյանը մեծ ուղագրություն է դարձնում վոտանավորի՝ հընչյունական կողմին, եվֆոնիկային: Եվֆոնիկան այն հնչյունական պատկերն է, վորը տիրում է բանաստեղծի տրամադրության վրա և նրան հարկադրում վորոշ հնչյունների կրկնությանը և դասավորությանը տալ հատուկ սիստեմատիկ բնույթ: Ինչպես հայոնի յեռուսականության պատմությունից, Պուշկինը իր հերոսի բնավորության բնութագրին կում է նաև հնչյունական բնութագրը: Որինակ՝ իր հերոսուհիներից մեկին, Մարիային նկարագրելիս Պուշկինը այնպիսի բառեր է գործ անում, վորոնց մեջ տիրաբար իշխում են Մ և Թ տառերը:

Վորոնք են Յերյանի նվաճումները տաղաշափության մեջ:

Ամենից առաջ՝ Յերյանի շափը շատ սերտ կապ ունի բոլոր դակության հետ: յերկրորդ՝ հանգեցրը պատահական բնույթ շունեն և վորոշ դեր են կատարում վոտանավորի մեջ: Յերրորդ՝ նրա մոտ բարի հնչյունական կողմը: Համապատասխանում է դրա նշանակությանը: Այդ բոլորի հետ միասին Յերյանը բերում եր մշակված և միաձոյլ լեզու, նոր և անսպասելի մակդիրներ, պատկերներ հարստություն և խոսքի ուժ:

Յերբ նկատի յեք առևուտ Տերյանի առանձնապես յերաժշտական՝ «Հրաժեղութիւնութեր», «Մրգաշաղվե» և Մոռածալ» վոտանավորելերը, այն ժամանակ տեսնում եք, վոր բանաստեղծը հայ տաղաջափական տրադիրիոն հանգաբանության մեջ վորոշ նարություններ ե մոցրել։ Հայունի յէ, վոր Պուշկինը բողոքել ե ռուս. հանգաբանության վորոշ ավանդական տրաժարետք դեմ։ Առևտ մեծ բանաստեղծը գրում է. «Յես կարծում եմ, վոր կզա ժամանակ, յերբ մենք կդիմենք չափից ազատ վոտանավորին։ Թուսական լեզվի մեջ շատ քիչ հանգեր կան, ամեն մեկը հրշեցնում է մյուսին, որին ակ «ոլոմեն»-ը անխուսափելի կերպով քաղում ե «ԿԱՄԵՆ»-ը. «ԿՍՎԵՏՎՈ»-ն «ԻՆԿՐԵԴԻԼ»-ն. Ուժ շի ձանձրակը «լուսուն», «ԿՐՈՅ»», «ԵՐԱԾՈՒՅՈՒՆ» և «ԿԱՐՈՒՅՈՒՆ» և «ԱԿԿԵՏԵՐՈՒՆ»։

Տերյանի այսորվածք մեր ձեռքի տակ գտնվող յերգերի մի զգակի մասը լոյս է տեսել նրա մահվանից հետո։ Այս հանգամանքի մեջ պետք է տեսնել անպայման հեղինակի խստապահանջությունն ինքն իր նկատմամբ (ինչ վոր գրել է, շի շտապել հրատարակել)։

Տերյանի հանգերի սրստեմը հիմնված է հայ լեզվի հնոյաների հատկությունների վրա։ «Եղուկ և շրջուոն վոտանավորի մեջ նա շատ հաճախ բանեցնում է եվֆոնիկան, որինակ։

«Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում,

Յեզ շշնջում ես և անուշ շրջում,

Պայծառ տրտմությանը ինձ ես անրջում

Ա գաղտնի սիրով սիրում ու հրցում։

Յեզ ժպտում ես ինձ, ակնարկում քննուշ

Ա գաղտնի սիրով սիրում ու հրցում։

Յեզ շշնջում ես, և շրջում անուշ,

Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում։»

Տերյանի մոտ, ինչպես տեսնում ենք, վոչ միայն բառերը, այլև տառերը՝ հնչյունները իսկ և են դրվում տրամադրություններ առաջ բերելու համար։ Որինակ՝ Ը տառ տրամադրության վարեցք Ե չուց տալիս հետեւյալ բառերի կապակցությամբ – աշուն, հուշեր, գիշեր, շշուկ, տրտմաշուք, իսկ Ռ տառը տրամադրության վերելքի նշան Ե, որինակ՝ չմեռնող, չմարող կրակ, կվառենք, և այլն։

Քննադատական գրականության մեջ այն կարծիքն է հայտնված, վոր Տերյանը վոչ թե պատկերավորության, այլ յերաժշտականության բանաստեղծ Ե։ Ասում են, վոր Տերյանի գրելու ձեվք գունեղ պատկերներով չե հագեցված։ Նրա ստեղծագործական տարերքը, արտահայտելու ձեվք գերազանցորեն համապատասխանում ե խոսքի ներդաշնակ յերաժշտականությանը։ Քննադատական գրականության մեջ նույնպես կարծիք կա, վոր Տերյանը պատկերների կողմից կիթում ե Ավետիք Խաչակրյանին, իսկ յերաժշտականության կողմից նրան գերազանցում ե։ Սակայն մենք պետք ե ասենք, վոր Տերյանի ակնբախ յերաժշտականությունը վարագույրի հետեւ ե թողնում նրա պատկերավորությունը, մինչդեռ Տերյանը պատկերների կողմից ևս բավական արուստ ե։ Բերենք մի քանի որինակ Տերյանի պատկերավորությունից։ Որինակ՝ կեղծ մագերը ժայռից իջնող ջրվեժ, մուլլ ծաղումի ջաների նման մի ձեռքը վառում ե աստղերը մեկ շեկ, գյուղի զանգը՝ յերամից զարնված թոշունի ձայնով, յետեկ հունվար, այսոր մայիս (Հայնեն ևս սիրում եր միտքը ունկրետացնել ամիսների անուններով – որինակ – հունվարը հացերի մեջ, մայիսը՝ սրտում)։ Տերյանը գործ ե ածուց գիշերարը, սրտիս մեջ վառվում ե մի հուր վորպես ջրերի մեջ երկինքը, ամպերը մաղում են վոսկի (հիշեցնում ե Դուռը՝

Նի շաղի շողի ժամք ելին), յերկրի ճաղիկները քակվեցին, յերկրի անհաս ճաղիկները բացվեցին. այսոր անլույս լուսով, զարնանամուս՝ մարդկանց հայագֆները նետեր մի միանալու գետով, ապագան՝ վորուես նորահարս ահով մի խնդուն մըտնում է մահիճ, զու այնպես եւ սիրում, կարծես թէ շես սիրում, աղոթքս թունու մի զանակ, նայվաճքդ սամում. կարուսելի մեջ մեղանական սերն է ձաղկել՝ սրն են բոլոր խոսքերը, տաղակարի պատմություն - յերեկ յես, այսոր զու, վաղը նա:

Տերյանը մեծ յերախտիք ունի նաև լեզվի մշակման գործում: Բենե նրա սիմվոլիստական լեզուն թումանյանի հետ համեմատած վորոշ չափով զերմոցային է, բայց և այնպես մեր այսորով գրական լեզուն բավական ճառանգություն է ստացել Տերյանից:

Տերյանը նաև բերել է լիրիկական ժանրի մեջ բավարարացնություն: Գործ է անել սոնետ, զակել, ելեգիա, տրիոլետ: Այս բոլորի հետ մրասին նա տվել է նաև լավագույն քաղաքական պոեզիայի նմուշներ: 1917 թվից հետո նա գրուց է վոգեվորոված վուանագորներ, փառաբանելով մարտիկներին և նրանց կատարած աշխատանքը: Պետք է նկատել նաև, վոր Յերյանը վերաբերեալ հանգաբանությունը, տեսլական իմաստով իրար նման բառերի հանգանյութումը և տվեց լուղական, համահնջռան հանգավորում:

«Յես լսում եմ հրացմանքի մի շշուկ,

Արդյոք զո՞ւ յես նորից հոգիս մեզմ հուզում.

Այս զիշերն է, այն հուշերն են տրտմաշոք,

Այն աստղերն են ցորտ յերկնօրում յերապում:

Տերյանը հաջողությամբ բանեցրել է յամբ, անապես, և ամֆիբրաքոս շաքերը. բերենք ամեն մեկը մի նմուշ:

Յամբ. - Հեռու յերկրի լոստ նովուս
Որերն որրդ յերգ են յերգում:

Անապետ. - Մոռացա ողիներս պայմառ,
Իմ սրտում դառն ու մութն շնչում:

Ամփիբրաքոս. - Կարծեն թէ դարձել եմ յես տուն,
Բոլորն առաջանն են կրկին.

Կրկին դու հին տեղը նոտան,

Շարժում ես իրիկը մեր հին:

Ինչպես տեսնում եք, Տերյանի վոտանավորները աշքի յեն
ընկնում համակից սեղմությամբ և յերաժշտականությամբ, սրա հետ
միասին ապրումների այնպիսի բարդությամբ, վոր ինքնին նրա
նոր մարդ լինելու ցուցանիշն է: Նրա վոտանավորներն ասես թէ
նյարդեր են բերել հայ պոեզիայի համար:

Ինչումն է տեսնում Վաշերի Բրյուսովը Տերյանի լիրիկայի
առավելությունները: Նախ՝ Տերյանը ձգտել է այն բանին, վոր
հայ պոեզիան յուրացնի արեվմտայելքրոպահն և ուսական
պոեզիայի վերջին տասնամյակների նվաճումները: Յերկրորդ՝ նա
բանեցրել է այնպիսի թեմաներ, վորոնք խորթ են մենցիլ հայ
բանաստեղծներին, յերրորդ՝ նոր որթմեր բերեց հայ տաղածագու-
թյան համար, բացառիկ խոտությամբ վերաբերվելով վոտանավորի
տեխնիկային և, վերջապես, չորրորդ՝ մի քանի գերազանց թարգ-
մանություններ տվեց հայ պոեզիային:

V.

Այժմ անցնենք Տերյանի արձակին: Վորին է Տերյանի
արձակի նշանակությունը: Տերյանի արձակը ևս, ինչպես և այս-
պիսն, ցույց է տալիս նրա աշխարհայացի եվրոպացիան դեպի
կոմոնիւմը: Տերյանի արձակը նշանակություն ունի նաև նրան-

նով, վոր այդտեղ Տերյանը շաշափել է մի քանի գրական հարցեր, վորն այս կամ այն շափով պարզութ Տերյանի եստետիկան և, վերջապես, շատ սերտ է Տերյանի արձակի և պոեմիայի կապը:

Վորոնեֆ են Տերյանի արձակի գլխավոր առավելությունները: Ամենից առաջ պետք է նկատենք, վոր նա խիստ քննադատական մոտեցում եւ սույն տալիս գեսքի հասարակական մի շարք խնդիրներ: Նա հարձակվում է, որինակ, հոգեվորականության և նրա վարած գայրոցական սիստեմի վրա: Ծաղրում է նրանց դաստիարական ճիշտական մտավորականությանը: Հոգեվորականությանը համարում է ռեակյոն ուժ, վորի գեմ պետք է անպայման անխնակութել: Տերյանը քննադատել է նաև պատմական հոգեվորական նությանը՝ հակադրելով Ստեփանոս Նազարյանին, Գամառ Քաթիսային և այլն: Յերբ վոր Տերյանը խոսում է հոգեվորականության մասին, նրա պատուը հրշեցնում է Միքայել Նալբանդյանի «Յերկու տողը»: Ինչպես Նալբանդյանը, այնպես ել Վահան Տերյանը խիստ է խոսում Միհրմարյանների մասին, շի հավանում վերջիններիս գիտությունը, ասելով վոր նրանք գիտական մերոդ չունեն:

Բայց այս բոլորի հետ միասին պետք է նկատենք, վոր «Մշակ» թերթին աշխատակցելով, Տերյանը գրել է նաև մի քանի ռեֆորմիստական հոդվածներ, վորոնց մեջ նա քննադատել է բորժուապիային, բայց միևնույն ժամանակ յերեպում է, վոր նա այդ դասակարգից սպասելիքներ ունի: Նա քննադատել է բորժուապիային նաև այն իմաստով, վոր այդ դասակարգը աղքատ ու սանողության գրության նկատմամբ անտարբեր է: Այնուհետև պետք է հրշատակենք Տերյանի հոդվածներից մի յերկուսը, վորոնիք կուտ քաղաքական բնույթ ունեն: Տերյանը խիստ գետ

Ե արտահայտվել ցարիկմի գաղութային քաղաքականությանը :
Նա հայերին կոչ է արել՝ կապվելու ռուսական զննութափիայի
հետ : Հարձակվել է նաև բործուակիայի և նրա ինսելիդենցի-
այի ապազգայնության դժմ :

Հեղափոխությունից հետո Տերյանը գրել է իր նշանավոր
պրոպագանիժիատական հոդվածը «Ինչ է ասու Լենինը գյուղա-
ցիներին» : Վորոնջ նն այս բրոշյուրի հիմնական կետերը - առա-
ջին՝ պատճերակմբ համերիաշխատական է, յերկրորդ՝ Ժամանա-
կավոր կառավարությունը հականեղափոխական է, յերրորդ՝
հոգը գյուղացուն կտա միայն բոլշևիկների կուսակցությունը,
չորրորդ՝ բայց նոզը դեռ բավական չի, առա համար հարկավոր
ե նաև համայնքական մշակում առաջավոր տեխնիկայով :

Տերյանի այս բրոշյուրը մեր ժողովրդական պոպուլյար
գրականության լավագույն նմուշներից է - թե՛ գրտական է և
թե՛ մատչելի : Այս բրոշյուրի մեջ նա հետեւում է նայքանդյա-
նի տրագիկիային : Այստեղ կոչու տալիս բրերի նկատմամբ իրա-
գրտական մուտքում, բայց սրա հետ միասին արտահայտելու
ձեվը մատչելի յէ : Նա իր խոսքը կոնկրետացնելու համար գործ
է անուշ ժողովրդական առածներ . որինակ - զեղ կանգնի, զե-
րան կկուտք, վորը սիրուտ եր գործածել նաև հարկենացը :

Այնուհետեւ Տերյանը գրել է յերկու նամակ հայ գյուղա-
ցիներին ազգված, վորոնց միջոցով նա աշխատում է գյուղա-
ցիությանը ազատագրել հականեղափոխական կուսակցություն-
ների ազգեցությունից : 1918 թվին Տերյանը գրու է «Գյու-
ղասիներին և բանվորներին» գրվածքը, վորտեղ նա ասում է.
«Մենք միշտ քարոզել ենք, վոր հայ աշխատավոր ժողովրդի
փրկությունը Ռուսաստանի բանվորական և գյուղացիական խո-
նդային իշխանության հայրության մեջ է, և ով վոր դեմ է

խորհրդային իշխանությանը, նա դավաճան է, նա ժողովրդի
թշնամի յէ:

Բանաստեղծի արձակի մեջ արտահայտված այդ մտքերը
համընկնում են նույն շրջանում գրան նրա վոտանավորների
վոզուն: Որինակ՝ նա դիմում է բանվորներին և գյուղապետ-
րին, ասելով:

« Զարդեցեք անդուլ, անգութ, անխնա,
Ճնշեցեք աշխարհն ապահան ու հին,
Թող քարը քարի վրա շմնա,
Վողջը մատնեցեք հրին ու մահին:
Յեվ կործանեցեք բանտերը վերջին,
Փրկեցեք վերջին շղթաները պիրկ,
Վոր կաշկանդել են մեր միտքն ու նոզին:
Վորակս փոթորիկ, իջեք ավերիչ
Յեվ խորտակեցեք աշխարհն այս զավիր,
Փոշի դարձրեք այստեղ ամեն ինչ »:

Տերյանի նշանակությունը մեծ է, վորակս ուսւ ժողո-
վրդի և նրա դեմոկրատիայի հետ հայերին սերտ կապելու
համոզված պրոպագանդիստ: Սրա հետ միասին պետք է
նշել նաև նրա քննադատական վերաբերմունքը դեպի ան-
ցյալը, դեպի հենց իր բանաստեղծի մի շարք սայթաքում-
ները: Իր արձակի մեջ բանաստեղծը խիստ կերպով է
արտահայտվել ռեակյալի մասին: Ռեակյան անվանել
է ավերիչ և նոզեսպան տեղատվություն:

1916 թվ. Տերյանն այնքան հասունացած էր, վոր
այլևս իր տսուցիչներին շեր հավանում: Նա ասում է՝
Բալմոնտը ձանձրալի յէ, Վյաշեսլավը շոր ու գիտուն, Ան-
լոգուբը հիվանդու ու ցավագին:

Շատ հետաքրքրական է նաև Տերյանի մի քանի կարծիքները հայ գրականության պատմության նկատմամբ: Տերյանն ասում է, յեթե ուշենանք գտնել հայ գրականության հերոսականը, դա ինքնուրույն հայրենիքի, կուլտուրական ինքնորոշման գաղափարն է, վորը հնչում է Յեղիշեյի և Խորենացու որերից:

Տերյանը լեզվի խնդրում վուտ գրական լեզվի կողմնակից:

Գրական կենտրոնացման տեսակետից Տերյանը մեծ նշանակություն է տալիս Շիրվանզադեյի գրամային. - Սունդուկյանի հետ համեմատած:

Տերյանը չի հավանում պոլսական գրականությանը: Պոլսական գրականության ուղղությունը համարում է արհեստական և նայրոնալիստական: Պոլսական գրականության լեզուն համարում է անմատչելի:

Տերյանը հայ նոր գրականությունը գավառական-գյուղական է համարում, չնայած նրան, վոր այդ գրականությունը առաջ է յեկել մեծ քաղաքներում: Արեվելահայ գրականությունը արեվմտահայ գրականության հետ համեմատելով, արեվելահայ գրականությունն ավելի կենսունակ է համարում՝ ուստական գրականության շնորհիվ:

Տերյանն այնուհետեւ գնում է հայ գրականության ուղիների խնդիրը: Մեր գրականության մեջ առաջին հերթին մեխը յեղել է գյուղը, այժմ Տերյանի կարծիքով մեխը քաղաքն է, քաղաքում ստեղծվել է նոր ինտելիգենցիա, այդտեղ տարբեր դրույների տակ տեղի ունի պայքար հնի և նորի միջեւ:

Տերյանի այս կարծիքները պետք են ասենք, վոր բոլոր ճիշտ չեն: Նրա մի քանի հայագիտերն այնպայման թերի

յէն և սրազ . որինակ - նրա այն տեսակետը . թէ նայ գրակա-
նության մերս աղջային անկախությունն է , սա միակողմանի
լուսեցում է : Ամենից առաջ՝ սա միայն նայ գրականության
ինդիրը շէ . ուստի գրականության մեջ ու նման տեեղնոց առկա ցէ
և վերջապես այդ պիտակի տակ չի կարելի դնել մեր բոլոր հե-
ղինակներին : Միայլ է նաև մեր գրականությունը բաժանել գա-
զականին և քաղաքայինի : Այդ տեսակետը կարելի յէ հերքել
Շիրվանզադեյի որինակով , նա նշանավոր է և զավառական գոր-
ծերով և քաղաքային գործերով : Այնուհետեւ պետք է ասել , վոր
Տերյանի կարծիքը պալսահայ գրականության մասին շատ խիստ
է և միակողմանի : Պետք է նկատել նաև : Վոր Տերյանը շափրի
ուորս եսթթարկական լուսեցում է ունեցել ժամանակակից քննա-
ռության մասին : Նա մի շաբթ ճիշտ դիտողություններ է արեն
ի մասին : Թայս ինքն ու ընկել է եսթետիկմի մեջ . թերագնա-
ւուով ադրասական գրականության նշանակություններ : Արդեօսա-
կերպով հրապարակախոսությունը և արվեստը իրարից ան-
ջառամ է :

Բայց ինարկէ այդ բոլորի հետ միասին Տերյանի գրականա-
քիտական հաջու : Ների հիմնական միտքը ճիշտ է . վոր նայ գրա-
կանությունը « ք է ձգորի աղջայինը միացնել միջազգայինի հետ »:
Այս տեսակետից նա մեր գրականության մեջ յերկու տիպ ե սույ
տալու : Առնդուկյանի Պեպոն և Շիրվանզադեյի Շպանեիկը :
Գալու լեզվական ինդիրներին , պետք է ասել . վոր Տերյանն
այս բաժնում ու մի յերկու շափականցություններ ունի : Պոլսական
գրականության լեզուն նա համարում է ջերմոցային և առու է .
թէ « Փարվանան » չեց փորի վողջ տաճկահայ գրականության հետ :
Հաճապիտին մեռան հեղինակ է համարում : Այնուհետեւ շատ
շնորոշ է Տերյանի կարծիքը Հովհաննես Թումանյանի մասին :

Հովհաննես թուժանյանի մասին զրուտ ե. « Թուժանյանը մեր յերեկվա գրականությունն ե և վոշ վաղվա »: Այս կարծիքը իհարկէ հիմնականում սխալ ե, նախ դա հերքվում ե այսորվա մեր գրական հասարակայնության կողմից և յերկրորդ. վոր Տերյանը հենց ինքը իրեն հակասում, վորովհետեւ « Փարվանան » համարում ե մի անմեռ գրական ստեղծագործություն :

Նաև հետաքրքրական ե նաև Տերյանի կարծիքը Արովյանի մասին: Ըստ Տերյանի՝ Արովյանի մեծ արժեքն այն ե, վոր նա վողջունել ե ուսուական տիրապետությունը, վոր մեր ժողովուրդը « դինջանա »: Հետո շատ հետաքրքրական ե նաև Տերյանի կարծիքը տաճկահայերի քաղաքական պատկանելության մասին: Նա վողջունում ե ուսուական տիրապետությունը տաճկահայքում, բայց պետք ե նկատել, վոր Տերյանը նկատի ուներ Ռուսաստանի քաղաքական հեռանկարը, ասելով վոր այստեղ պետք ե հաղթանակի դեմոկրատիան՝ բանվորը և գյուղացին:

Պետք ե խոսել նաև Տերյանի կարծիքի մասին թարգմանական գրականության վերաբերյալ: Տերյանը լեկուն համարում ե կուլտուրայի նշանակույցը: Նա կողմնակից ե ժողովրդների կուլտուրական համաշխատականության, բայց նա դեմ ե ավելորդ թարգմանություններին. նա դեմ ե սոցիալիզմը թարգմանել ընկերաբանություն, սոցիոլոգիան - ընկերաբանություն, փիլիսոփանիմաստասեր:

Կարեվոր ե նաև Տերյանի վերաբերմունքը Վալերի Բրյուսովի նկատմամբ: Ինչպես մենք տեսանք, Տերյանը հարձակվել ե ուսուականությունների վրա, բայց նա խնայել ե միայն Բրյուսովին և մինչեւ իր կյանքի վերջը մնացել ե նրա բարեկամը: Պետք ե նկատել, վոր Մաքսիմ Գորկին ել շատ մեծ կարծիք ե ունեցել Բրյուսովի մասին և նրան համարել ե ուսու

գրողների մեջ ամենից կուլտուրական հեղինակը։ Ըստ Կարեվոր է նշել նաև Տերյանի վերաբերմունքը դեպի ժողովրդական ստեղծագործությունը։ Տերյանը մեծ հիացմունքով է խոսում ժողովրդական ստեղծագործության մասին։ Փոլկլորի մասին։

VI.

Տերյանի կրած ազդեցության խնդիրը դնելով՝ պետք է նկատել հետեւյալը։ Մատենցյանը միանգամայն սխալ կերպով կասկածի յեւրարկել Տերյանի ինքնուրույնությունը։ Պետք է նրկատել, վոր բանաստեղծը թեև զանազան հեղինակներից ազդվել է, բայց և այնպես նրա ստեղծագործության մեջ ամեն ինչ կը տերյանական է։ Տերյանն ազդվելով՝ իր տաղանդը խորապես է։ Այս կապակցությամբ յեւրոպական գրականությունից կարելի յեւ մի որինակ բերել։ Համարտինը շարունակել է հայրունի Զայլը Հարուդը և անգլիացի մեծ հեղինակի հերոսին դարձրել է յեկեղեցու յերկրպագու։ Այս արդեն բայրոնիկմ չեւ, այլ աղավաղում։

Ազդեցությունը Տերյանի համար նպատակ չի յեղել, այլ միզոց իր նպատակի համար։ Նկատի պետք է առնել նաև այն հանգամանքը, վոր հեղինակներն առհասարակ սկսում են նմանությամբ։ Տերյանը հասունացել, դարձել է միանգամայն ինքնուրույն հեղինակ։ Հետաքրքրական է նկատել, վոր Պուշկինի հանճարեղ գործը, «Իմաստուն Ոլեգի յերգը» Վալերի Բրյուսովը կապում է Շիլլերի հետ։ Կարդալով Շիլլերի բալլագաները՝ Պուշկինը փորձել է գերմանական բալլագաների նման գործ ստեղծել պատճեն լեզենդներից։ Կարամզինից նյութ առնելով՝ Պուշկինը գրել է իր «Իմաստուն Ոլեգի յերգը»։ Վորի շափը հիշեցնում է Շիլլերի բալլագաների շափը։ Այս բոլորը նկատի առնելով, պետք

Ե ասենք, վոր Աստեղյանի կարծիքը հիշեցնում է դեկաբրիս-
տական շարժման պատմաբաններից վումանց - որինակ Պ. Մե-
լիկովին, վորն ամբողջ շարժումը բացառում է նրանով, վոր
«յերիտասարդության վրա ազդել եր արտասահմանը»:

Հայ գրական քննադատության մեջ յեղել են մարդիկ, վորոնք
Վահան Տերյանին կապել են սոսկ արեվմտա-յեվրոպական և ռու-
սական գրականության հետ, հազվի շառնեղով նրա սերտ առն-
շությունը հայ գրականության հետ: Մինչդեռ պարզ է և մենք
արդեն նկատել ենք, նախ՝ Տերյանի կապը թումանյանի հետ
և յերկրորդ՝ նրա կապը Խանակյանի հետ: Խանակյանի հետ
առանձնապես նկատելի յե այդ կապը Տերյանի և Մթնշաղի ա-
նուրզներ»-ի միջոցով: Այստեղ առանձնապես յերեվում է նրա
թախմնու տրամադրությունը և փիլիսոփայական հակումը: Այդ
թախմը բղիում է յերկու հեղինակների մոտ ևս հայրենի տան
ավերումից, գյուղի քայլայումից, մենության ապրումներից և
արդյունաբերական քաղաքի դեմ ունեցած դժգոհությունից:
Խանակյանը և Տերյանը, իրենց գրական ստեղծագործության
մեջ վորոշ համաշխատակցություն են ունեցել: Մենք արդեն
գիտենք, վոր Խանակյանը խռոտովանել է յուր և Աբու Լալա
Մահարու» մեջ Վահան Տերյանի վորոշ գործակցությունը:
Ինքը Խանակյանը յեղել է Վահան Տերյանի և Մթնշաղի
անուրզներ»-ի անդրանիկ ընթերցողներից մեկը, վորի դիտողու-
թյունները անպայման

հազվի յե առել Վահան Տեր-
յանը: Խանակյանը իր հողերի մեջ խռոտովանել է, թե առա-
ջին անգամ կարդալով Տերյանի վտանավորները, ինքը չի հա-
վանել, բայց 1908 թվին նախ քան «Մթնշաղի անուրզներ»-ի
լույս տեսնելը Խանակյանը կարդացել է և հափշտակվել:

Առանձնապես պետք է շեշտել նաև Տերյանի կապը Դու-

րյանի հետ : Տերյանը սռաղաշափական արվեստի մի քանի կողմերով կապված է վոչ միայն Վերլենի անվան հետ այլև անպայման պետք է վորոշ չափով, այս խնդրումներան կապել և Դուրյանի հետ, որինակ եվֆոնիկան, վորք Դուրյանից հետո հաջող գործ է անում : Վոչ միայն նայ գրականության հետ Տերյանը վորոշ շփում է ունեցել : Առանձնապես պետք է հրշատակել Տերյանի հրապարակախոսական և քննադատական հոդվածների վրա Միքայել Նալբանդյանի վորոշ ազդեցությունը : Մի քանի խնդիրներում Տերյանը գնացել է Միքայել Նալբանդյանի բաց արաձ ճանապարհով, որինակ, յերբ հոգեվորականության դեմ է խոսում, ինչպես և Միհրմարյանների վերաբերյալ Տերյանից առաջ նույն խստությունը ցուց է տվել նաև Նալբանդյանը : Ապա նշելի յէ նաև յեվրոպական դիպլոմատիայի դեմ Տերյանի խիստ խոսքը, վորը դարձյալ մեր գրականության մեջ սկսվում է Նալբանդյանի «Յերկրագործություն»-ից, վորի մեջ խիստ կերպով Նալբանդյանը քննադատում եր այնպիսի խմբերի հաջիստական պետություններին, ինչպիսին են Շուսատանը և Անգլիան : Նույնպես և գիտությունը ժողովրդի մեջ մասսայականացնելու գործի մեջ Տերյանից առաջ մեր գրականության մէջ այս նույն գործը կատարել է Նալբանդյանը : Նալբանդյանը գրում է վերին աստիճանի մատշելի, միաժամանակ տալիս է գրտական մոտեցում, վերջին նորությունները : Պետք է շեշտել նաև ժողովրդական ստեղծագործության պաշտամունքը, վորը մեր այդ յերկու նշանավոր հեղինակների մոտ ել հավասարապես ուժեղ է :

Հայ գրականության հետ անպայման Տերյանը վորոշ չափով քննադատորեն է ոգտագործել նաև ռուսական, ֆրանսիական սիմվոլիստներին՝ Վալերի Բրյուսովին, Ալեքսանդր Բո-

իրն և Պ. Վերլենին։ Առանձնապես պետք է խոսել Վերլենի մասին, վորիւստեղծագործության մեջ ևս, ինչպես և Տերյանի առեղծագործության մեջ, եյականը քաղաքային հոգեբանությունն է։ Վերլենի յերգերը ամբողջապես շնչում են քաղաքային մթնոլորտում։ Պետք է հիշատակն Վերլենի աշխան յերգերը, վորպիսի յերգերի միջոցով ընկճված քաղքենի բնակիչը իր հուսահատական կենսահայացողությունն է արտահայտում։ Վերլենի յերկերը կարդալուց հետո ձեր առաջ պատկերանում է մի հեղինակ, վորը կտրված է հասրակությունից, տղորված է հուսահատ մոքերով, մի մարդ, վորին քաղաքի յեռն ու զեռը ձանձրապետ են և նա քաղաքին փախչում է և մունում ինքն իր մեջ։ Քաղաքի հարազատ բնակիչը լինելով՝ Վերլենը իրեն զգում է քաղաքի մեջ ինչպես ձուկը ջրի մեջ և շնայած նա դժգոհում է, այնուամենայնիվ նա այդ դժգոհությանը չի տալիս իրան անողոք շեշտեր, ընդհակառակը։ Վերլենը իր այդ դժգոհությունը հայտնում է բազման մեջ շնչում։

Պետք է խոսենք նաև Ալեքսանդր Բլոկի մասին. ուժբախտաբար մեր քննադատական պրականության մեջ չի ուսումնասիրված Տերյանի և Ալեքսանդր Բլոկի կապը, մինչդեռ այդ կապը բավական սերտ է յեղել։ Ալեքսանդր Բլոկը ևս տանջվել է մենակությունից։

Кругом почти все чужие люди

И между своих я сам не свой

Ալեքսանդր Բլոկ ևս սիմվոլիստների մեջ այն հազվագյուղ հեղինակների է, վորն իր քնարը կապես զայտք հեղափոխության հետ։ Ականջով քաղաքային կյանքի ոռմանտիկական պրականությանը, նա ի վերջո հանգում է արդյունաբերության քա-

ղաքի մեջ Տայր առնող հասարակական հակասությունների ըմբռեմանը . բայց պետք է միաժամանակ խոստովանենք , վոր Ալեքսանդր Բլոկի յերկերի մեջ միստիկիզմի և եսթետիկմի տարրերը յերբեք ել հիմնականում շնաղթահարվեցին : Նույնը պետք է ասել նաև Ալեքսանդր Բլոկի լեզվի մասին : Նա առանձին հակում է չույց տալիս դեպի մթին վորակումները , մշուշապատ մակդիրները : Նա հաճախ գործ է աճում՝ անհայտ , խորհրդավոր , անարտահայտելի և նման բառեր : Այս բաժնում ևս Բլոկն աշխատել է հիմնականում հաղթահարել իր լեզվի իրացիոնալիզմը , իր մթամած լեկսիկան : Հեղափոխության ժամանակ Ալեքսանդր Բլոկը դադարեց լինել « գեղեցիկ տրկնող » և « անծանոթունու » յերգիշը , ճիշտ այնպես . ինչպես Վահան Տերյանը դադարեց լինել « ցնորք աղջկա » յերգիշ և դարձավ իր նշանավոր « Վերադարձ »-ի յերգերի հեղինակը :

Բայց մենք պետք է ասենք , վոր սխալ կլիներ ամբողջապես Տերյանին կապել միայն սիմվոլիստական գրականության ուղղության հետ : Մոտիկ քննությունը չույց է տալիս , վոր Տերյանը բավական մոտ է յեղել կանգնած նաև գերմանական ռոմանտիկմին : Այսպես որինակ՝ կապույտ գույնը , կապույտ ծաղիկը յերգել են նաև գերմանացի ռոմանտիկները : Կապույտը նրանք համարել են հեռավորի , անհասանելիի նշան : Նրանց այդ հեռավորի ձգտման մեջ արտահայտվել է այդ հեղինակների դժգոհությունը ներկայի նկատմամբ և նրանք յերազել են կամ անցյալը , կամ աւագան : Այդ կողմից շատ հեռաքրքրական է Տերյանի և գերմանացի նշանավոր ռոմանտիկ Լենաուի կապը : Որինակ - Լենաուն այսպես է յերգել գիշերը .

Weil' auf mir, du dunkles Auge
Ihre deine ganze Macht
Erstte milde, träumerische,
Unendlich süsse Nacht.

Ինչպես ոռմանտիկները, այնպես ել սիմվոլիստները, մանավանդ հաղմոնոր վերացական հասկացողությունները անձնավորելու համար գրում են մեծատառով, որինակ՝ հավերժություն բարձրացնելու համար մոտ ևս նույնն է, մանավանդ «Մրնշաղի անողջներ»-ի մեջ Տերյանը, ընթերցողի ուշադրությունը գրավելու համար, մի քանի վերացական հասկացողություններ, վորոնք սովորական հասարակ անուններ են և մեծատառով չեն գրվում, գրում են մեծատառով:

Տուրգենեվը ապդեպությունը ոդի հետ ե համեմատել, վորը շրջապատում ե մարդուն նրա կամքից անկախ: Գյոթեն իր ինքնակենսագրության մեջ գրում ե. «Քսան տարի առաջ կամ հետո Ցնված լինելով, յես բոլորովին այլ մարդ կլինելով»:

Ռեակցիայի ժամանակի գեղարվեստական գրականությունը Տերյանին իսկապես վոր ոդի պես շրջապատել ե և նրա ստեղծագործության վրա թողել իր շուշը: Տերյանն ել ուս սիմվոլիստների նման ոեցեֆ գներով ե արտահայտել ռեակցիայի շրջանը, ինտելիգենտների վորոշ խավի խորը ապատիան, նրա պեսսիմիկը ու ինդիվիդուալիզմը, իրական աշխարհից փախչելը, անուրջների վոլորտը մտնելու հակումը: Ռեակցիոն գրականության վրա իշխում եր դեհադենտությունը (անկումայնությունը), վորը արտահայտվում եր դասակարգային անկման, հետեւյալ ցուցանիշներով – ամորալիզմ, հասարակությունից փախուստ տալ, եստետիկը, ձեվի դրվատում, արվեստը արվեստի համար լուզունգը և այլն:

Առաջին գրականության ընդհանուր հատկանիւները՝ երուսակացը, միաժամանակ արտահայտում է նաև մեր գրականության մէջ, մանաւանդ կանաչը հարցում։ Արդվույսուների հետ միասին ներգործները և նաև մի գերմանացի փիլիսոփա՝ Ուոու Վայնինցերը, վորն իր և Ան և բնակորությունն ու վերնագիրը կրող սովորածաշուլ գրքանքի մեջ տղամարդկանց յերկինք և բարձրացնում, իսկ կանաչն ստորապես, պնդելով, վոր կինը զորկ է ստեղծագործական յերեվակայություննից և հրշողությունից։

Այդ նույն շրջանում դեր է կատարել նայել սանինիզմը, Արյիբաշեվի և Սանին վերնագիրը կրող տիրանացակ վեպը։ Սանինը քարոզում է հաճույք և բավականություն, ատելով, թե հաճույքի մեջ է կյանքի իմաստը, մարդը ի բնե անժումկալ է և ամենից անկեղծ մարդը նա յէ, ով վոր չի զսպու ինքն իրեն։ Նա մեծարուս է եղուկմը և կանչամ է անեցն մոմենուր։ Կորչի վազը ։ Անինիզմը արգյունքն եր այն հասարակական քաղաքական ապահովայի, վարը իշխում եր Ռուսաստանում։ 1905 թվի հեղափոխության պարտություննից հետո ինտելիգենցիայի մի մասը լքելով պայքարի գիրքերը, ընկալ հոգևուության գիրքը և ուսու իրականություննից փարչելով սկսելու փարձը կայ միաժամանակին, կամ զուենկապրած իստորիզմին։ Իսկ զուս գեղարվեստական, գրական խնդիրներում ուսակցիայի զեկավարները պահանջում ենին, թե ժամանույն է հրաժարվել, հեռանալ ուսարկեցից։ Ինչի համար, ինչով են պահանջանառ նրանք այդ նրանք իրական կյանքը համարում են և ձանձրույթը և բնական է, վոր այդ գեղագետներն իրենց անկուսային արտադրությունները տարածում եյին հրշողություննից։

նականում մի իդեալիստական աշխարհայացքով, վերև արդարացնում եր Եռական արարու և դավանանության միտումը:

Հետաքրքրական է նկատել, վեր յերկու յեպրոպական քննադատներ և գրականության պատմագետներ, ինչպիսին են Արագետը և դոկտոր Բուստին, յերկուսն եւ պնդում են, վոր Գրուստական հեղափոխությունից հետո և գերմանական, մարտյան հեղափոխությունից հետո՝ այդ յերկու գրականությունների մեջ եւ իշխել են ռեակցիայի տրամադրությունը: Դոկտոր Բուստին իր «Deutsche Dichtung» աշխատության մեջ գերմանական գրականության ռեակցիայի ժամանակը բնորոշում է հատկություններով: 1. փախուստ դեպի անցյալը, 2. արեգելան անշարժության մեջարում, 3. յերկրի հաղթահարում յերկնքի միջոցով, 4. այժմեականի տոռացումը բնության իդիույթի միջոցով:

Ռուս գրողներից վասանց, վորոնֆ Վորոշ տաղանդ ունին, բայց շեյին ապրում իրենու ժամանակի խնդիրներով, ինքնապարփակվում եյին իրենք իրենց մեջ և արհամարտաքրով նայում աշխարհին, հելինսկին անվանում է միկրոսկոպիան հանձարներ, փոքրիկ մեծ մարդիկ, վորոնֆ մեռնում էն շաղաժամ՝ դեռ իրենց կենդանության ժամանակ: Պետք են ասենք, որ Տերյանը շմուզ այդ հեղինակների շարքի մեջ, այլ իր «Վերադարձ»-ի յերգերի շնորհիվ և իր հանրողութ գործունեության միջոցով դարձավ հայ գրականության նշանակոր հերիսկներից մեկը: Տերյանը թոթափում է սիմվոլիզմի լուծը իր ուսուցիչից, նորից նա դիմում են ռեալիզմին, նայում աշխարհին և ալիստական մարդու տեսանկյունով և հիմնականում աջակամ հեղափոխության շահերին: Ինչպես մենք արդեռ ասել ենք, որ նոյն ժամանակ նա մեծարել է Շահումյանին, նրան անվա-

Նեղով ազնիվ, սիրելի, հմայիշ մարդ:

Մենք ասել ենք, վոր Տերյանը գրական դպրոց ե հիմնել,
Նրա սկսած գործը շարունակել են մի քանի բանաստեղծներ: Ինչ-
պես և ամեն մի մեծ բանաստեղծ, Տերյաննել հանդես յեկալ
մանր բանաստեղծների մի ամբողջ շքախմբով:

Այդ փոքր բանաստեղծ-

ների մասին Գյորեն նկատել է «Nimand mehr will Schuster
sein — derman ein Dichter» (Այլ ևս վոշ վոք չի ուզում
կոշկակար լինել, ամեն մարդ ուզում է բանաստեղծ (լինել):

VII.

Ինչ վոր Բրյուսովը ասել է Պուշկինի նկատմամբ, հիմնա-
կանում դա ճիշտ է նաև Տերյանի նկատմամբ: Պուշկինը
բազմաթիվ ազդեցություններ ե կրել, բայց մնացել ե ինքնու-
րույն, ստեղծելով մի նոր բան, վորն առաջներում չի յեղել:
Նա ունեցել է իր վոճի ներքին միությունը, բազմաթիվ իրար
հակառակ վոճերի ազդեցության դաշտում:

Պետք ե նկատի առնել, վոր Տերյանը հատկապես ուժեղ է
թե՝ «արտմության» և թե՝ «կենսախինդ» արտահայտելու իր ար-
վեստով: Մի ժամանակ նրան անվանել են «աշնան յերգիչ»,
բայց միենուն ժամանակ նրան կարելի յէ համարել «գարնան
յերգիչ»: «արևածագի յերգիչ»: Տեսնենք, թե նա ինչպես-վա-
րակիշ կերպով ե յերգում կենսախինդը.

«Ժպիտներով խաղացեւն
Յերգն ե ձուլցել իմ կյանքին,
Սերու յերգ ե իմ հոգում,
Միրո յերգ ե իմ հոգին:

Տերյանի լավագույն գործերը այսոր մեր խորհրդային

դպրոցների հայ գրականության խրեստոմատյաների զարդն են կապում: Մեր խրեստոմատյաների մեջ հաճախ տպվում են Տերյանի հետեւյալ վոտանավորները. «Հիների շոբան սարերում հեռու», «Գարնանամուտ», «Գարուն», «Առավոտ», «Հրաժեղուի զազել», «Վերադարձ», «Արեվածագ», «Մեր թշնամին բերում ե տանկեր», «Կուսաբացին Նա բարձրացավ կախաղան», «Քեզ եմ յերգում», «Գազել խնդության» «Յերանի նրանց, վոր մութ բանտերում», «Պետերբուրգ» և այլն:

Տերյանի գրական ժառանգությունը նկատի առնելով՝ մենք պետք ե ասենք, վոր Տերյանը մեն յեղավ նրանով, վորշափով Նա թողեց իր մենության յերգերը և կապվեց աշխատավորության հետ: Յեթ Նա մնար իբրև սուբյեկտիվիստի հեղինակ, անպայման Նա չեր ունենա մեզ համար, այն արժեքը, ինչ վոր ունի այսոր:

Տերյանը հետազա հայ բանաստեղծների համար ստեղծել ել վիրոշ բանաստեղծական հաստատուն տրադիցիա, այն իմաստով, վոր նրա տեխնիկական նվաճումներից հետո վորեվէ բանաստեղծի համար այդ նվաճումներից ցած իջնելը վոչ միայն անհարմար ե, այլև իրատ նկատելի: Իսկ մենք գիտենք, վոր տեխնիկայի խնդիրը յերկրորդական խնդիր չե: Այդ խնդիրը իր ժամանակին սուր կերպով դրել ե Վալերի Բրյուսովը: Յուրաքանչյուր արգեստ ունի ստեղծագործական և տեխնիկական կողմեր: Վերջինս, այսինքն տեխնիկական կողմը, թույլատրելի յե համարվում յերաժշտության և նկարչության համար, բայց բանաստեղծական տեխնիկայի ուսումնասիրությունը համարվում ե փեղակ, աս նախապաշարմունք ե: Ինչի համար զյուտեր անել, յերբ մեզնից առաջ շատ բան գտնված ե և մնում ե միայն սովորել: Իհարկե, նոր բովանդակությունը նոր ձեզ ե պահան-

զում, բայց սրա հետ միասին պետք է ձգտել, վոր վոճը դառնա հասու և թե բոլորն իրար նման լինեն, ինչպես միատեսակ դրամները : Պետք է նկատել ասում է Բրյուսովը, վոր խոսքի վարպետը, որինակ վրձինի վարպետը, կոմպոզիտորը, արձանագործ՝ պետք է սովորեն իրենց գործի տեխնիկան : Տեխնիկայի ուսմունքը պատրաստի տրված վերջացած շե և ունի իր վարգայման որենքը, վորը մշտական ամեն մի սերունդի առաջ կանգնած է վորպես հերթական խնդիր և վորը պետք է լուծվի : Բայց ինարկե սրա հետ միասին շպետք է մոռանանք նաև այն հանգամանքը, վոր տեխնիկան դեռ բավական շե, ինչպես ասում է Հայնեն, կարելի յէ բանաստեղծական խոհանոցի արհեստը իմանալ, բայց կրակ ու միս չունենալ :

Կուլտուրայի մեջ ունեցած իր դերով յուրաքանչյուր բանաստեղծ՝ պարտավոր է լինել փոքր ինչ նաև լեզվաբան :

Տերյանն ի միջի այլոց իր կապը հայրենիքի հետ պահել է նաև իր լեզվաշինարարությամբ : Խոսքը բանաստեղծության մեջ հիմնական արժեք է և սրա վրա շատ է աշխատել Վահան Տերյանը : Լեզվի մաքրություն և թուշանք, արտահայտությունների զարմանալի հարստություն, պատկերների առատություն, ուժեղ կարողություն զգունած բառերը նոր կապակցության միջոցով կենդանացնելու, նրանց թարմ կյանք տալու, վոճի վարպետություն – այս բոլորը մինչև այսոր ել մնում են Վահան Տերյանի ուժեղ կողմերը և այդ ուժեղ կողմերից գրական նոր սերունդն անպայման պետք է ոգտվի, ինչպես ասում են՝ «Միշտ Ալեքսանդրը հաղթում է Փիլիպոսի զորքերի ոգնությամբ» :

Տերյանին ուսումնասիրելով, նրա ուժեղ կողմերից ոգտվելով, մեր նոր խորհրդային գրական սերունդը պետք է

հաղթահարի Տերյանի ստեղծագործության մեջ այն պահասությունները . վորոնք արգասիք են այն դարաշրջանին , վորն ապրել ե Տերյանը 1905 թվականի հեղափոխությունից հետո յնդաձ ռեակցիայի ժամանակ :

Վահան Տերյանը այն բանաստեղծներից է , վորը ձգտել է հայ բանաստեղծությունը ազատել նեղ ազգային սահմանափակումից և մոտեցնել այն Միջազգային լայն հունի մեջ թե՛ թեմատիկայով և թե՛ կատարման ձեվով :

Շատ քիչ բանաստեղծներ կան , վորոնց մասին կարծիք յե ասել , թե վաղ են մեռել , վորոնց մասին առանց սիրալվելու կարելի յե պնդել , վոր իրենց հետ շատ բան են տարել դեպի գերեզման : Վահան Տերյանը պատկանում է այդ բանաստեղծների թվին :

Տերյանի մի շարք գործերը ցուցու են տալիս , վոր յեթե նա ապրաւ լիներ , այսորվա մեր խորհրդային գրականության առաջավորներից մեկը կլիներ : Բայց հայ գրական քննադատության մեջ յեղել են և սրան հակառակ կարծիքներ , ասել են , թե ինչքան ել ապրի բանաստեղծը . նրա իդեոլոգիան կարող ե դառնալ պրոլետարական , բայց հոգեբանությունը՝ վոչ : Ինչու չեր կարող կոմունիստ Վահան Տերյանը դառնալ պրոլետարական բանաստեղծ : Այս հարցին պատասխանել են այսպես «Պրոլետարական բանաստեղծը պետք ե դուրս գա պրոլետարիատի նոր կուլտուրայի ձոցից , մարդկության սոցիալական կյանքը հեղաշրջող այդ դասակարգի ստեղծագործական աշխատանքի բովից , կապված նրա հոգեկան աշխարհի հետ իր ապրումների բոլոր թերերով» . Մի խոսքով յեթե Տերյանն անցյալից ե գալիս , չի կարող պրոլետարական բանաստեղծ լինել : Այս ցնդաբանությունը հերքել ե խորհրդային գրականությունը բազմաթիվ փաստերով , սրա փայլուն ապացուցը կառող է լինել Ալեքսեյ Տոլստոյը , վորն այսորվա մեր խորհրդային գրականության ամենափայլուն դեմքերից մեկն ։

Դետք և յակել . Վոր Տերյանը չի կարողացել ս' ըրջացնել Ծոյտ Ռուբելու «Ընձենավոր» -ի թարգմանությունը , ուս թողել է այդ յերկի նախերգանքի հոյակապ թարգմանությունը , վորոն այնքան դուր է յեկտ , ակադեմիկ Մառին : Տերյանի «Վերադարձ» -ի յերկեղի վոզոն կողման դիպում է այդ թարգմանության հետեւյալ յերկու տունը .

«Սիրահարը պիտի լինի արեի պես շքնաղ ու վառ ,

Առատաձեռն և ունեվոր , ակատ դուցակն ու վորավար ,

Կովում հաղթող , յերկարամիտ , մտքով հարուստ , լեզվով ճարտար ,

Ում լիովին չի արգած այս ,

Չի կարող լինել սիրահար :

Մերն ե դյութիշ և սքանչելի , խորախոր հուրդ , թեկ դժվար

Չպետք է նոյն դասը դասել և յանկասեր և սիրահար :

Մար ու ձոր կա յերկուսի մեջ , տարածության ովկյան անձայր ,

Լավ լսեցեք , Դուք իմ խոսքը , և մի խառնեք դուք դա իրար :

Դժբախտաբար Տերյանը համակոր աշակերտ շունեցավ : Յեթե դուք թերթում նք . Հայ պարբերական մասուլը , հանդիպում եք Տերյանի բազմայիր («աշակերտներին») , վորոնք շարունակում են զբաղվել իրենց անձնական նեղ ապրումների մջուշապատ կեղումները արտահայտելով : Մրանք յրենց Տերյանի աշակերտներն են անվանում , բայց սրանք բոլորն ել Տետեյալ պահատությունը ունեն՝ անձնականը նրանք չեն կարողանում բարձրացնել մինչեւ հասարակականը , այնպես ինչպես Տերյանն եր անում : Տերյանական կոչված բանաստեղծների մեծ մասը նրա ձեվերը կրկնում եր առանց ինքնուրույն մոտեցման և որիգինալության :

Մի խոսքով՝ յեթե ամփոփելու լինենք Տերյանի մասին ասանց լրցակեալ ե նկատենք , վոր Տերյանն իր լեզվով , բանաստեղծական կույտարարութ և «Վերադարձ» -ի յերգերի քաղաքական բովանդակությամբ շատ խիզը հետք է թողել մեր գրականության մեջ և նրա ստեղծագործաթյան լաբացովին ավանդները ժառանգել ե խորհրդապետին գրականությունը :

ԱՍՏՐՈՎԱՆ 1971 թ.

ԽՈՎԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԱՀ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԻՒԾ 2 ԱՌԵՎՐԵ

7

353

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0075912

A-III
5604 >